

Frederick Vagter

891.99. - 82

R-19

ԲԱՆԱԲԵՌԳԵՍ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

891.99-82
Բ-19

ԴԵՏԿՐԱՏ



-6 NOV 2011

891-99-82

4-19 ^{այս}

ՔԱՆԱՔԵՌԳԵՍ


ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

26

31-9 1006
19823

=====

3623



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՍՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1 9 3 4

29 JUL 2013
POS VON 3-

72.694

Պատ. խմբագիր Ս. Հարությունյան
Տեխ. խմբագիր Տ. Խաչվանճյան
Սրբագրիչ Հ. Մանավադյան

Պետհրատի տպարան. Դիպլիտ 8459 (բ).
Հրատ. 2891. Պատվեր 398. Տիրութ 2000
Հանձնված է արտագրության 25 փետր-
վարի 1934. Ստորագրված է տպելու 4
մայիսի 1934 թ.

ԴՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

ՅԵՐԳ ԽԱՎԱՐԻ, ՄԱՀԱՑՄԱՆ ՅԵՎ
ԼՈՒԾՍԻ ՈՒ ՀԱՐՈՒԹՅԱՆ
(Քանախոգեսյան փրագմենտ)

1

Այս մթամած ձորի գիզանտներում անել,
Ուր ձմրանը բուք է, ցուրտ, իսկ ամրանը՝

Սոթ,
Ուր աճել են վախով մի քանի խեղճ ծառեր,
Խլչում է հին Ձանգուն հավերժորեն խանդոտ:

Խլչում է հին Ձանգուն:—Լալի՞ս է, թե

Դուցե պատմում է նա հին ողբերի մասին,
Տրտնջում է ցավով լուսինների ներքո,
Վորոնք հրհռացին հտալիտ ու դնացին:

Վոսկի զանգերի պես, լուսիններ՝ ըմբռած
Ներ թթենու վրա թափեցին ցուրտ փոշի,
Ու գիշերը նստեց քարածայռի վրա,
Նայեց տխուր աչքով ձորից յելնող մուժին:

— Ձա՛ն-դո՛ւ... Ձա՛ն-դո՛ւ... վերից, անհույս
Գանչեց աղետավոր յեկեղեցու զանգը,
Բանաքեռից՝

7

Հազար սերունդ մեռավ այս հողերին գերի,
Իսկ ուժեղը քամեց վոստանների կյանքը:

— Ձա՛ն—գո՛ւ... Ձա՛ն—գո՛ւ... խավար,
անլույս աշխարհում,
Մարխի, վախի ահեղ ստվերներով դաժան՝
Ձարհուրանքով բացվեց քանի՛ առջու
դարուն

Ու տերը տեր մնաց, իսկ մշակը՝ մշակ...

Ու Ձանգուն ել մնաց այս ձորերի բանտում,
Անհույս ցավով յերգեց ազատության յերգեր,
Վորպես հպարտ բազե մի ավերակ վանքում,
Վորպես խռով յերազ, վորպես սաղմոս կերկեր:

Դարիվ—դարիվ անցան տարիներն ու դարեր,
Այնտեղ՝ Ձանգուն լացեց, այստեղ՝ յերգեց
քամին,

Ու բարձրացավ մի վորբ, ասպնջական արեւի
Վոստանների վրա, յերկրի ու աշխարհի...

Ու գիշերը նստեց քարաժայռի վրա,
Կույր աչքերով նայեց ձորից յեկնող մութին,
Վոսկե զանգերի պես լուսիննե՛րը մեռած
Ծեր թթենու վրա թափեցին ցուրտ փոշի...

2

— Ձան—գո՛ւ... Ձան—գո՛ւ... այն ի՞նչ, այն
ի՞նչ զնգաց մոտից.

Հետեցին նրան նոր զնգոցներ ուրիշ,
Առավոտը կապեց արնակարմիր գոտի,
Ու փոշեղեն սյուններ վեր բարձրացան ձորից:

Ո՞վ չտեսավ շողուն ալգաբացն իմ յերկրի,
Յերբ կյանքը մեր՝ վորպես կաշկանդված
գետի մի խուլ:

Քանդեց ու տրորեց ամբարտակներն իր հին,
Ու սրընթաց հորդեց դարերի խուլ վոխով:

— Ազատութ՛յո՛ւն, — ասաց, — ջրի՛ն, հողի՛ն,
մարդո՛ւն,

Ազատութ՛յո՛ւն հասկի՛ն, յերգի՛ն, աշխատանքի՛ն:

Բարձրացան նոր հասկեր արեւավոր արտում,
Նոր հատիկներ ընկան, նոր հատիկներ
անգին...

— Յերկրին բույս ու մաշին, յերկրին կյանք ու
արեւ,—

Ու բարձրացավ սգալից ցեղավորի կանչին,
Մեծ բանակը մեր նոր, նա, վոր դարեր,
դարեր

ձաշակել եր հլու տիրոջների դամչին:

3

Ձանգո՛ւ, Ձանգո՛ւ, նրանք իջան քո յեղերքը,
Լեզենդական թղթեր, ծրագրներ առած,
Իսկ դու յերգում ես քո հնամենի յերգը:

Ու անցյալի մասին՝ քո յերգերով վառված՝
Պատրաստվում են ահա, վոր հասցնեն նրան
Հուժկու բրիչներով մահասաՀման հարված:

Փա՛ռք քեզ ջրի՛, շուշա՛ի՛ հաղթանակող խրա՛մ,
Քե՛զ, վիթխարի վերեւը անդասակարգ յերկրի՛,
Քե՛զ, շողշողուն արեգ իմ աշխարհի վրա...:

Քո լույսերի ահեղ արշալույսի առաջ,
Յես գինեւ եմ ահա դասակներն իմ յերգի
Շեփորներո՛վ առնական և բազմաշառաչ...:

Դ. ԴԵՄԻՐՔԱՆ

ԳԻԳԱՆՏԻ ԾՆՈՒՆԴԸ

Հաղթական թափով իջնում ե նա Սևանից:
Նա՛ Սևան-Չանգիի հերոսական պրորբ-
մը, պրոյեկտը և իրականացող առաջին գի-
ղանոր՝ Բանաբեռզեյը:

Մեկը տասը գիղանտներէց, վոր իջնելու
յեն չուտով Սևանից:

Հաղթական թափով իջնում ե նա Արարատ-
յան դաշտ՝ սփռելու իր կայծակները նրա ար-
դյունաբերության մեջ:

Հաղթական թափով վեր ե բարձրանում
նրա դեմ սինթետիկ կաուչուկի գիղանոր՝ իրեն
չըջապատող մյուս գործարաններով:

Յեզ սկսված ե գիղանտների սոցիալիստա-
կան մրցումը:

Մրցում՝ բարձրացնելու յերկիրն ավելի
բարձր քան Սևանը, քան Մասիսները: Բարձ-
րացնելու յերկիրը՝ նրա տնտեսությունը, նրա
կուլտուրան:

Յերկու հուժկու թեվեր՝ Սևան-Չանգի և
Սինթետիկ իբրեւ այրողյանի թեվեր՝ թռցնելու
յեն յերկիրը վեր, մինչեւ նրա ստրատոսֆերը:

Նրանք հիմնովին վերափոխելու յեն մեր

յերկրի տեղագրական կերպարանքը, սոցիալա-
կան կազմը, յերկրի բնակչի հոգեբանությունը:

Յերկիրը պիտի դառնա առաջնակարգ ար-
դյունաբերական յերկիր:

Սևան-Չանգին ամենախիզախ պրոբլեմն է:

Ութսուն հազար ձիաուժ՝ Վոլխովստրո-
յը:

Հարյուր քսան հազար ձիաուժ՝ Սվիրստրո-
յը:

Ութ հարյուր քսան հազար ձիաուժ են
բերում լեռների բարձունքից Սևան-Չանգվի
10 կայծակների կասկադը:

Այսինքն՝ ավելի քան 8 Վոլխովստրոյ, 5
Սվիրստրոյ:

Նրա դեմ չի կանգնելու նաև Դնեպրոստրո-
յը, վոր պիտի արձակի 800 հազար ձիաուժ,
մինչև Սևան-Չանգին՝ 820 հազար ձիաուժ:

Յեվ ուրիշ առավելություն:

Նա չի սատչելու, աշխատելու յե տարին
տասյերկու ամիս անխափան, և ապա դառնալու
յե ուղուլյատոր մյուս հիդրոկայանների հա-
մար Անդրկովկասում:

Ուրիշ առավելություն, վորով նա բացա-
ռիկ նշանակություն է ունենալու:

Սևան-Չանգի կասկադներն իրենց ջրերով
փոռողելու յեն Սարգարաբադի 100 հազար
հեկտար և դոերի 30 հազար հեկտար անջրդի
անապատները: Գերեզմանային տարածու-
թյունների վրա պիտի շնչի զմրուխտ կանաչը,
ծաղկեն բամբակն ու ծխախոտը, պիտի նախշ-

վեն մրգառատ այգիները, բանվորական ա-
վաններ պիտի փռվեն ոճերի ու կարիճների
բների տեղ: Արտադրություն, գործ, կուլտու-
րական կենցաղ, ուրախություն...

Բայց...

Սևան-Չանգին մի ստվերոտ կողմ ունի:
Նա համարյա անհայտ գիգանտ է լայն հասա-
րակական խավերի համար:

Դեռ շատ շատերը չեն հասկանում նրա մեծ
խմաստը: Մեր գիտակցությունը հեռ է մնում,
չի հասնում այն հսկայական ընթացքին, վոր
ունի Սևան-Չանգին: Յեվ վաղը, յերբ նա յի-
ովին կիրականանա, յերբ նրա կասկադները
կիջնեն դաշտ՝ մենք շլացած պիտի նայենք նրա
մեծության վրա:

Այսոր դեռ կան ձեռնարկներ, վորոնք լըր-
ջորեն չեն մտածում Սևան-Չանգվի մասին:
Մի վորեւե Քոլադիրան կայարան, վոր այսօր
ասենք ուշացնում է ցեմենտի վազոնը, մի...
կամ շատ հիմնարկ, վոր իր գծով խանգարում է
կամ դանդաղացնում այս կառուցման ըն-
թացքը, նա զարկում է որյեկաիվորեն Սևան-
Չանգվի պես մեծագույն մի ձեռնարկության...

Քանաքեռգեսի Քիստեմն իր սկիզբն առ-
նում է Արզնու ձորից: Այնտեղ նրա ամբարտա-
կրն է, ապա թունելը, ապա ջրանցքը, վոր դա-
լիս է դեպի Քանաքեռի ձորափը: Այստեղ ձևա-

վորված ե չըջանող ջրանցքը, ավազանը, «ցցե-
րի» ջրանցքը, ճնշման կամերան :

Վեհանիստ, խրոխտ բարձունքից ձորն ե
իջնում ընկեց ջրանցքը և գետափին բետոննե-
րի, քարի, յերկաթի մի ամբակուռ զանգվածով
վեր ե խոյանում հիդրոկայանի շենքը:

Ահա այս ամբողջ սիստեմի վրա յե, վոր
դիշեր-ցեղեկ տեղի յե ունենում մի վերին աս-
տիճանի լարված պայքար:

Տեղի յե ունենում աննախընթաց, հա-
մառ կռիվ ընության, ժայռերի, հողի, քիմիա-
կան նյութերի դեմ:

Յեվ այդ կովում պայքարում ե մի բազմա-
մարդ կռիվատիվ, վոր 1929 թվից ամբացել ե
Քանաքեռչիներն և վճռել ե տեսնել նրա կատար-
յալ իրականացումը:

Յերեման քաղաքի Լենինի անվան փողո-
ցի բարձր շենքից գնում ե հոսանքը խիզախ
մտքի դեպի Քանաքեռչիների 4 որյեկտները, չի-
նամասերը: Այստեղից վարչությունը՝ գլխա-
վորությամբ ինժեներ Հ. Տեղ-Աստվածատրը-
յանի և ինժեներական անձնակազմի հոծ բազ-
մության ոժանդակությամբ մշակում, վերա-
մշակում ե այդ մեծ ճակատամարտի մեծ պը-
լանները:

Այդ մտքերի, նախագծերի, հրամանների
էլեկտրական հոսանքը գնում ե բարձունքնե-
րը, Քանաքեռչիների 4 որյեկտները՝ չինամա-
սերը, այնտեղից իջեցնելու էլեկտրական ու-
ժի հոսանքը:

Յեվ 4 չինամասերում մի ամբակուռ կո-
լեկտիվ՝ բանվորների ու ինժեներ-տեխնիկա-
կան անձնակազմի՝ անձնվիրաբար ի կատար
են ածում այդ մտքերը, նախագծերն ու հրա-
մանները:

Այնտեղ բարձունքների վրա կռիվ ե գնում
այս բուպեյիս:

Հերոսական կռիվ:

— Շինմասի պետը: Այ— ցույց են տա-
լիս մի փոքրիկ սեղանի կողմը:

Նայում ենք ու չենք տեսնում նրան:

Սեղանի հետեւ նստած ե մի մրտ չորե-
քով մարդ, արտաքինով սեվագործ բանվոր:

Դուրս ե գալիս, վոր նա յե չինմասի պե-
տը, ինժեներ Գ. Ազարաբյանը:

Նա անքնությունից ալրվող աչքերով նա-
յում ե մեզ: Մենք հայտնում ենք մեր այցե-
լության նպատակը: Նա մեզ թույլտվություն
ե տալիս գիտելու հիդրոկայանի մասերը:

Սկսվում ե գրույցը: Զգացվում ե, վոր
չինմասի պետն ուրախ ե մեր այցելությունից
և ունի իր առանձին հիմքերը դրա համար: Յեվ
դա բնական ե: Ուրիշ արդյունաբերական և
այլ ձեռնարկներ չատ են այցելված, չատ ե
գրված նրանց մասին: Բայց Քանաքեռը դեռ
համարյա չունի իր սչերկը:

Այսինքն լուսաբանված ու մասսայակա-

նացված չե Քանաքեռը, այդ նշանակալից դի-
պանտը, վոր մի կողմից նյութական կուլտու-
րայի միավորը է, մյուս կողմից դպրոց է,
ուր հասարակ բանվորը կառուցման պրոցեսի
մեջ վորակավորվում, վերափոխվում, դառ-
նում է սոցիալիզմի գիտակից կառուցող:

Շինմասի պետը, վոր հիդրոկայանի հիմ-
նադրումից մինչև որս նվիրված աշխատում է
այստեղ՝ ամենից շատ վրդովված է ահա այդ
պատճառով:

Ավտոն բազեյի պես պտտվելով իջնում է
ձորը:

Ահա և գիպանտի գլուխը—կայարանի շեն-
քը: Նա լուռ ու խորխոր գուրս է յեկել գետնի
տակից և ծանր, ուժեղ հայացքով նայում է
վեր:

Բետոնային—պատային աշխատանքներ են
գնում դեռ: Վերեվից մի ալիքով իջնում են
ջրընկեց խողովակները:

Լուռ է չորս կողմը: Միայն աղմկում է
ավազի մեքենան: Լաստակները դեռ չըջապա-
տել են շենքի պատերը: Արդեն գետնի հիմքից
վեր են բարձրացել պատերը: Պատրաստ են
ջրանցքը, տուրբինների մասը, գեներատորների
մասը. մնում է սրահը և կտուրը: Դա մեծ տեղ
չի բռնում: Բայց վո՞րպիսի լարումն: Յերկաթ-
բետոնի ամրակուռ մի զանգված հսկայա-
կան բոունցքի նման սեղմվում է այդ շեն-
քի մեջ: Դա փոքր տեղ է, բայց կենտրոնաց-
նում է այնպիսի ուժ, ինչպես դրեդնոտան է,

պողպատի մարտկոցը, դինամիտը: Նա լար-
վում է ահավոր ուժով:

Նա պիտի այստեղից, ձորի անդնդից չո-
շափի հեռավոր վայրերում սարքված հազա-
րավոր մեքենաները: Ինչո՞վ է պակաս դրեդ-
նոտից իր ուժերի կենտրոնացումով, կուտա-
կումով: Այո, հիդրոկայանը մեծ կուտակումն
է նյութական ուժերի, լարում է մեծ կամքի
և ստեղծագործության:

Բանվորներ են յելումուտ անում շենքը:
Դրանցից վոմանք զալիս լուռ անցնում են շեն-
քից դուրս յեկող ջրանցքի կողմը: Այն-
տեղ պատի աշխատանքներ կան դեռ ևս:


Շենքից ահագին ջրանցք է գնում դեպի
ներքեվ: Այդտեղից է հեռանալու այն ջուրը,
վոր Արդնիի ամբարտակից զալու յե և վերե-
վից սարսափելի ուժով բնկնելու յե ներքև և
դառնալով կրկին հասարակ ջուր՝ գնալու յե
ներքեվ հանգստանալու մի պահ: Այդ ջրանցքի
պատերը վերջացած են դրեթե: Ամուր, հիմնա-
վոր պատեր, հազարավոր բազալտի քարեր
մեկ մեկ, համբերատար ու համառ ձեռքով շար-
վել են որ—որի, ամառ—ձմեռ:

— Գիտե՞ք ով է այս պատերի հերոսը:

— Ո՞վ:

— Այն բանվորը:

Ցույց են տալիս կառուցող բանվոր Թաշճ-
յանին, վորը գլխակոր, խորասույզ իր աշխա-
տանքի հետ է և մեղ չի նկատում: Անորակ
բանվոր եր Թաշճյանը, վոր Արարկիրից յեկավ



այստեղ: Յեկավ Քանաքեռի Տիմազյան
որերից, աշխատեց, վորակավորվեց, կապի իր
գործին մի առանձին խանդավառությամբ,
ինչպիսի մոլեռանդ թափով, սիրեց իր գործը և
համարյա մենակ ինքը շարեց այդ ջրանցքի
պատերը: Ուզում է տեսնել իր ձեռքի գործը
մինչև վերջ:

Այժմ նա վորակյալ վարպետ բանվոր է և
խոսք է տվել մնալ մինչև կառուցման վերջը:

Նայում ես նրա շարած պատերին և պատ-
կառում ես այդ կամքի լարման և գիտակցու-
թյան և խանդավառության առաջ:

Թաշճյանի որինակն ուսանելի յե: Նա նոր
մարդ է դառել կառուցման պրոցեսի մեջ: Նա
ինքը կառուցելով սովորել է կառուցման գոր-
ծը և իր գործը կառուցել է իրան՝ Թաշճյանին:
Թաշճյանն ապագային նայող բանվոր է, նա
պրոլետարիատի մարտական տիպն է: Նրա
հետ է, վոր մասսաները շարժվում են դեպի
սոցիալիստական շինարարությունը:

Լուռ աշխատում է Թաշճյանը և աչքից
խուսափում:

Բայց ուր ել գնա, թագնվի նա՝ շարած
պատերը ցույց են տալիս նրա գործը:

Թաշճյանը հիմնական բանվոր է, բրիգա-
դիր: Նա իր աշխատանքը տարել է ձմեռվա
դառը ցրտերին և ամառվա կիզիչ արևի տակ:
Նա ինքը դպրոց է իր բրիգադի համար, կեն-
դանի անձնագոհության որինակ և վոգեվո-
րության աղբյուր:

Մտնում ենք կոփած, ամրակուռ, յեր-
կաթբետոն շենքը: Ինչե՞ր է անում յերեքհերթ
անդուլ աշխատանքը գիշեր-ցերեկ:

1930 թվին սկսված են հողային աշխա-
տանքները:

Հիմքը դրված է 1932 թվին:

Առաջին բետոնը դրված է 1933 թվին (հուն-
վարի 17-ին):

Պատը 1931-ին, (հունվարին):

Այսպես է շարում, պատում ընկ. Աղա-
բաբյանը, չեչտելով թվականները, իբրև գըր-
վագներ մի մեծ պոեմի:

Հեչտ է ասել հունվարի 17-ին, 25, 30, 35 %
ցրտին, դյուրզգաց բետոնի և վերջապես վո՛չ-
չուգունի մարդու համար, վոր աշխատում է
այդտեղ...

Չորս բրիգադ կոփում ու կռում են այս
ուժապիրկ մարտիցը: Բետոնագործ, վորմ-
նադիր, հյուսներ, արմատուրողներ:

30 թվի ապրիլից է յեկել այստեղ ընկ. Ա-
ղաբաբյանը:

— Այնպես է անցել ժամանակը, վոր չեմ
նկատել:

Ի՞նչ կարելի յե նկատել այսպիսի մի լար-
ված ճակատամարտի մեջ, ուր գիշեր-ցերեկ
մարդիկ հարձակման մեջ են:

Գիշերը չի քնել նա, բետոն են գցել ինչ
վոր պատասխանատու տեղում:

— Լավ, մի՞թե չունեք բանիմաց և պա-

տատխանատու ոգնականներ կամ վարսկետներ:

— Ի՞նչպես չունեմ, շատ բարեխիղճ և պատրաստված մարդիկ են նրանք, բայց բեռներն այնպես բան է, վոր հազար աչք է պահանջում: Պետք է ճիշտ և հաստատ դնել: Սխալ յեթե յեղավ, ել չես կարող քանդել: Պատասխանատու յենք և այն ել ամենակարեւոր տեղում: Քնել չի կարելի, պետք է սեփական աչքով տեսնես ամեն մի քառակուսի մետրն ինչպես է դրվում:

Ահա թե ինչո՞ւ յեն տենդային փայլում նրա աչքերը:

Նա ժպտում է շարունակ և հոգնած նայում: Հետո հիշում է.—

— Հայաստանի խորհրդայնացման 12-րդ տարեդարձին, նոյեմբերի 28-ի դիշերը հիմքում ճեղքվածք եր նկատվել 36 մետր յերկաթության և 4 մետր խորության, պետք է ռապորտ ներկայացնեյինք: Տակը ջուր եր հոսում: Պետք եր ջրերը կապել և ճեղքի մեջ բետոն լցնել: 500 խորանարդ մետր բետոն գնաց: Բրիգադը պատվո խնդիր եր դրել— «վաղը ռապորտ տալ, վոր ճեղքվածքը փակված է»: Յեվ ճեղքվածքը փակվեց: Ամբողջ գիշերը չը տեսնված, տազնապալից աշխատանք եր: Որը լուսացավ և մենք ռապորտը տվինք:

— Ո՞վ նկատեց ճեղքվածքը:

— Ընկ. Տեր—Աստվածատրյանը: Նրա աչքից բան չի փախչի:

Յեվ հարգանքով ունքերը հավաքում է պատմողը:

Ինչվոր եպոսի տպավորություն է թողնում այս հատուկտոր դրվագները, վոր Քանաքեռ չինի պատմության մեջ անվերջ շղթաներով պալիս են 30 թվից մինչև ուր:

Նրանք կառուցում են և պատմում: Այդպես է հյուսվում մեր սոցիալիստական եպոսը, կառուցման մեջ:

Այդ պատմության դրվագների մեջ է մտնում կոմյերխականների շտուրմն ամառվա ամիսներին:

Շտուրմն սկսվեց ամենաօրատատախանատու առաջադրանքով: Բետոնային աշխատանք:

Կազմվեցին կամավոր բրիգադներ, վոր կոմբլիշի քարտուղարի, մի խմբակ ել տեղակալի ղեկավարությամբ սկսեցին աշխատանքը:

Այս բրիգադների ջնոթիվ հուլիս ամսում կատարվեց 500 խոր. մետր բետոնային աշխատանք և ապահովեցին մոնտաժային աշխատանքները:

Այս շտուրմը մեղմացրեց ոգոստոս ամսվա ճեղքվածքը:

Ի դեպ այդ չարաբաստիկ ճեղքվածքը: Վողջ տարին կրիզիս է վորմնադիրների, հյուսների, քարտանների և բետոնագործների:

Յեվ մանավանդ ցեմենտի և իհարկե անտառանյութի:

Ինչ առաջադրանքի վրա վոր խոսք ե լի-
նում՝ գալիս ե կանգնում ցեմենտի վրա:

Ցեմենտ— սա յե մեջքը կոտրում պլաննե-
րի:

Սա յե այն որյեկտիվ—սուբյեկտիվ պատ-
ճառը, վոր կախ ե ընկնում գիզանտի վրտնե-
րից և չի թողնում շարժվելու:

Սա Քանաքեռչիների ամենամեծ ահազանգն
ե, վոր զարկվում ե ամեն որ:

Հասնում ե տեղ այդ ահազանգը, շարժ-
վում են արդյոք համապատասխան ինտուի-
ցիաները:

Ասում են ցեմենտ չատ կա Կասպիում,
միայն Լենինականը վազոն չի տրամադրում:

Ասացին, վոր չինմասի պետը դնացել ե
Լենինական, վոր համաձայնեցնի, կարգավո-
րի այդ խնդիրը:

Ասացին վոր այնտեղ համաձայնել են տը-
րամադրելու վազոններ:

Ասացին, վոր արդեն ընկեր Աղաբաբյանը
վերադարձել ե և վազոնները ցեմենտով կըս-
տացվեն անխափան:

Հետո ասացին, վոր առաջին 1 թե 2
վազոնը յեկել ե, բայց ելի սկսել ե ընդմե-
ջը... Քոլագիրանն ե հիմի ել բռնում առա-
ջը:

Մինչև յե՞րբ պիտի շարունակվեն այս
ձգձգումները:

Արդեն ձմեռը վրա յե հասնում, չենքի կը-

տուրը ծածկելու մնում են մի քանի որ: Յե-
դանակները չեն սպասում Քոլագիրանին...

Վերջապես աշխատանքը Քանաքեռչիների
այս բնագավառում ունի իր սարեցիֆիկ պայ-
մանները, տեխնիկական հաջորդականություն-
ներ, ամեն անգամ չեն կարող «հարմարվել»,
գիզանտը կանգ ե առնում, սրա ամեն մի ուր
հազարների հարց ե: Ամբողջ յերկիրը, Անդր-
կովկասը, Միությունը սպասում ե Սևան-
Ջանգի կապիադին, նրա առաջին միավորն
արդեն ուշացել ե:

Թող շարժվեն այնտեղ, թող հասկանան,
վոր ամեն մի կետ, ամեն մի կայարան, ամեն
կայարանապետ, վերջապես ամեն հիմնարկ
թե մարդ—անհատ, վոր այս կամ այն կերպ
սուբյեկտիվորեն չի կատարում իր պարտքը
Քանաքեռչիների առաջ, նա պարտական ե մնում
ամբողջ յերկրի առաջ:

Ցեմենտ չկա— դա նշանակում ե վազոն
չկա:

Իսկ վազոն կա թե չկա, այդ լավ գիտեն
մեր կայարանապետները և նրանց գործի ու-
ցիոնալացումը:

— Ուրեմն ի՞նչ, պլանները կատարո՞ւմ
եք, հարցրի մի անգամ ընկ. Աղաբաբյանին:

— Ի՞նչ, սե տախտակին ենք— Ժպտում ե
նա, տխրելով սակայն:

Բայց ափսո՛ս, այստեղ Քանաքեռչիներում
կա մի նվիրված առաջատար ջոկատ, վոր պատ-
րաստ ե ամեն տեսակ շտուրմի: Նա բոլորովին

եւ արժանի չե «որոշեկտիվ պատճառների» զոհ լինելու:

Չենք ծածկում, նա, այդ կոլեկտիվն եւ ունի իր թերութիւնները, որինակ՝ մեխանիզմների վոչ լրիվ ոգտագործումը, բանվորների կենցաղի բարելավումը, մանավանդ վերջինը՝ այն մտքով, վոր չի չարժում տեղից այդ ծանր հարցը հարկավոր չափով անհանգիստ անելով համապատասխան տեղերին, չի կարողանում գտնել ինքնագործության այնպիսի ձեւեր, վոր ձեռքի տակ յեղած միջոցները դարձնի ինքնամիջոց ինքնիրան բարելավելու:

Սա պահանջում է մեծ լարումն:

Բայց պետք է փորձել, հասնել, իրագործել:

Մի բան լավ է հասկացել Քանաքեռչիների յերրորդ մասի ղեկավարութիւնը և դա պիտի շեշտել վերոհիշյալ թերութիւնների կապակցութեամբ: Այդ բանվորների վորակավորման գործն է: Անշուշտ կարիքը մեծ դեր է կատարել յայտեղ, կարիքը վորակյալ ուժերի, վոր ամեն բոպե ձեռք չի բնկնում ուրեմն և ըստիպված ես «ինքնագործութեան» միջոցով ձեռք բերել:

Շատ բանվորներ յեկել են Քանաքեռչին իբրեւ հասարակ, անորակ ձեռք և տարիների ընթացքում շնորհիվ ղեկավարութեան ջանքերի՝ վորակավորվել են:

Պետք է այստեղ նշել և մի ուրիշ հանգամանք, վոր ավելի կարեւոր է: Քանաքեռչի-

նում սկսել է մուտք գործել մի ուրիշ ստեղծարար առողջ սկզբունք: Այդ այն է, վոր վորակյալ բանվորը վորակավորում է անորակին և սա յել իր հերթին հետեւյալ անորակին:

Վարպետն այստեղ պատվի գործ է համարում ուժեր հասցնել:

Ահա ամենագնահատելին Քանաքեռչինում:

Այսպես անորակ բանվոր Թաշճյանն այստեղ դարձավ վորակյալ վորմնագիր: Յեւ այս վերջին որերս, յերբ ինքը շենքից բարձրացել է ճնշման կամերան, ձորում իր տեղ թողել է իր ձեռքով հասցրած վարպետին:

Սա արդեն գործ է, սա հենց ինքը մի շինարարութիւն է:

Ղեկավարութիւնը, վոր ձեռնարկել է այս գործը, պետք է սկսի տարածել իր շինմասի բոլոր բնագավառներում:

Ծանոթացնում են բանվոր Կայծակի հետ: Արարիլիցի յե: 30 թվից յեկել է սեվագործ բանվոր, հիմա վորմնագիր վարպետ է: Կայծակը Քանաքեռչինի «սանն» է: Այստեղ է նա վորակավորվել, այստեղ է դառել գիտակից բանվոր, կուսակցական:

Նա լավ է ըմբռնել, վոր իր բոլոր նյութական—մտավոր կյանքի բարելավման աղբյուրն աշխատանքն է: Նա հարվածային բանվոր է: Այնպես է մերվել գիզանտի կառուցման, վոր նրա հոգսերը զբաղեցնում են իրան: Կայծակը

լավ գիտի թե ինչ է կատարվում ամբողջ շինմասում, — այդ հետաքրքրում է նրան:

— Ընկեր Կայծա՛կ, գիտե՞ք վոր Սինթետիկ — Կաուչուկը Քանաքեռչինին սոցմրցման է հրավիրել:

Ժպտում է քթի տակ...

— Մենք ենք նրանց սոցմրցման հրավիրել:

Յեւ վերելում է, Կայծակն այնքան է առաջացել, վոր նման հարցերը միամիտ բաներ են նրա համար:

Կայծակը գիտակից բանվոր է արդեն:

— Կուռենյանք մեր կաուչուկը, կաղաւթներ արտասահմանի կախումից, — բացառում է նա, յերբ խոսում եմ կաուչուկի մասին:

Շատ է ուզում սովորել, տեխնիկական լուրջ գիտություն ձեռք բերել:

— Ե, գնացեք սովորեք, մտեք ինստիտուտ, վորեւ կուրսերը:

Այդ խոսակցությունը յեղավ ընկ. Թումանյանի ներկայությամբ:

— Ուզո՞ւմ ես, համեցեք, ուղարկենք, — վճարար հարց է դնում ընկ. Թումանյանը:

— Ուզում եմ:

— Մենակ պետք է ե՛կ աշխատես, ե՛կ սովորես: Կամ ճաշից հետո, կամ առաջ:

— Զանձ, յես ես չեմ ուզում, վոր ինձ վրա ծախսեր անեն: Միայն հնարավորության տան վոր համ աշխատեմ համ սովորեմ:

Այո, Կայծակը ձգտում է բարձրանալ:

— Պրակտիկայից շատ բան գիտեմ, բայց պաքիչ է, — ասում է նա — թերթիան եմ ուզում:

Այսինքն կանոնավոր ուսում:

— Այո, այո, կանոնավոր ուսում:

Կայծակը կապված է Քանաքեռչինի հետ, չի ուզում փախչել այնտեղից: Նա այդքան գիտակցություն ունի, վոր մարտական դիրքերը չի կարելի հանձնել և գնալ վերակալորվել: Քանաքեռչինը մարտական դիրք է: Նա ուզում է իր ազատ ժամերը նվիրել վորակալորման, ուսման, նա ծարավի յե գիտության:

Դա նրա իրավունքն է, պետք է նրան տալ այդ իրավունքը:

— Հիմա վորտե՞ղ ես աշխատում Կայծակ:

— Ձորից դուրս ենք յեկել, խողովակների մասում հողային բետոնային աշխատանքները վերջացնում ենք, $\frac{1}{3}$ մասը վերջացել է: Գնում ենք բուքսիրի:

— Ո՞ւր:

Ավազանը:

Կայծակն ինքն իրան համարելով արդեն «տանու» մարդ, խոսում է մյուս բանվորների մասին, գովում է նրանց անձնվեր աշխատանքը, նկատելով իհարկե նաև թերությունները:

— Անձնագոհ տղաներ են, — խոսում է բավականությամբ նրանց վերելքի մասին: Շատերը փոքր եյին, յերբ յեկան: Բայց մեծացան, վորակալորվեցին: Հիմա աչքի ընկնող բրիգադիրներ են:

ի դեպ մի հանդամանք: Ամբողջ Քանաքեռ չինում յես հանդիպելով ամեն տեսակ քննադատական վերաբերմունքի մեկմեկու հան դեպ, չլսեցի վոչ մի բամբասանք կամ արհամարհական խոսք դեպի իրար:

Նրանք բոլորը վողեվորված են և միասնացած են գործի պրոցեսի մեջ: Կառուցման հողսը, նրա առորյա կյանքը, բազմազբաղ կյանքը կլանել, առողջացրել ե նրանց:

Խոսք յեղավ սեզոնային բանվորների մասին: Դրանք տարափոխիկ թռչուններն են: Բայց կան և մեծ մասը կանոնավոր սեզոնային են: Ամառը գնում են, աշնանը վերադառնում:

— Լավ աշխատողներ են, — ասում ե ընկ. Թումանյանը, — պատահում եր, վոր Զանգին բարձրանում ե և սպառնում շենքին, հարկ եր լինում շտապ ջրի առաջն առնել: Բացատրական աշխատանքի կարիք չեր լինում: Տղերք ջանձնավիրաբար իջնում են ձորը: Մի որ 16 Ժամ աշխատեցին:

Այս մթնոլորտն ստեղծել ե բանվորական այն առողջ միջուկը, վոր գոյացել ու ամրանում ե Քանաքեռ չինում: Այդ միջուկը կառուցման սկզբի որից մինչև որս իր ուսերի վրայով բարձրացնում ե գիզանտը: Դրանց մեջ կան նաև ռուս բանվորներ, վորոնք նույնպես յերկու յերեք տարի առաջ եյին յեկել:

Դրանցից մեծ մասն առաջ են քաշվել և հիմա պատասխանատու պոստերի վրա յեն:

— Կարճ դասընթացներ ունենում ենք, — ասում ե ընկ. Թումանյանը, — հենց կառուցման վրա անցնելով թեորեաիկ և պրակտիկ մասերը:

Ահա ուրեմն և բանվորների կենդանի դպրոցը:

— Լավ, ընկ. Թումանյան, հիմա ձեզ ի՞նչ ե պակասում:

Կոտրված Ժպիտը կնճռոտում ե աչղեկի դեմքը:

— Ի՞նչը — ցեմենտը... Շատ ել պետք չե, քիչ մասեր են մնացել: Բարդ մասեր են մնացել հյուսնական աշխատանքից և ցեմենտը թույլ չի տալիս հաջորդականությունը պահպանել: Փորմերը պետք ե լցվեն, ցեմենտը չորանա, հանլի և ռացիոնալ կերպով գործածվի: Տուրբինի մասում 2 լամիս ե անտառանյութը մնում ե, վորովհետե ցեմենտ չկա, վոր լցվի և անտառանյութն ազատվի, տարվի ուրիշ մաս:

— Բա վո՞նց ե լինելու ձեր բանը:

— Յեթե մինչև ձյունը գալը 50-60 վազոն ցեմենտ տան՝ չորրորդ կվարտալում կավարտենք շենքը:

Հետո բացատրում ե.

— Տեխնիկական տեսակետից պատասխանատու մասերն ապահովված են: Մնում ե սրահը և ծածկը: Արդեն հասել ենք սրահին, ու յեթե... Բետոնը շուտ հասնի... .

Բետոնն ամեն բոպե ընկնում ե լեզվի տակ, նրանից չես ազատվի:

— Տուրբիներն ընդունվում են արդեն, գեներատորներից յերկուսը լրիվ ստացված են: Յեթե չենքը պատրաստ լինի՝ կարելի չե մոնտաժն սկսել: Սանգարում ե և մեծ կռանը՝ վոր ուշացնում ե խարկովը:

Յեվ դուրս ե գալիս, վոր յեթե այդ մեծ կռանը չլինի՝ չինամասերի ավարտելն ել չի ոգնի, վորովհետեւ ծանր մասերն այդ կռանը պիտի վերցնի:

Միջանկյալ հենաբաններից մեծ մասը չինված են: Յերեքի գլխի բետոնը չի դրված:

— Ընդամենը 9 խորանարդ մետր ցեմենտի համար, վոր յեթե լինի՝ 8 ժամում կվերջացնենք:

Ահա այսպիսի առորյա յե ապրում գիզանտը: Նա մղվում և գեանից վեր, անհամբեր փնջացնում ե և կեր ե պահանջում, վոր աճի, ծառանա ձորի մեջ և արձակի իր ահռելի եներգիան:

Յեվ քանի ու քանի հոգսեր են պաշարված նրա շուրջը: Բնական ավազը, վոր լավ չի հասցնում տրանսպորտը, սայլերն աշխատում են ամեն մեկն որական մի վոտք, մեխանիզմները, վորոնց բանեցնելու համար պետք են վորակյալ բանվորներ:

Հետո հոգսեր, վորոնք կապված են կենցաղի այլ և այլ հարցերի հետ:

Փոքրիկ սենյակում մի մեծ նիստ կա:

Բրիգադիւրները յեռանկյունու և աշղեկի հետ միասին կազմում են պարզեվատրվողների ցուցակը:

Մեկ մեկ հարցնում են բրիգադիւրներին.

— Ապա՛, ո՞վ կա քո ցուցակում:

Բրիգադիւրը նայում ե իր յերկար ցուցակին: Շատ են, ամենքին չի կարելի պարզեվատրել: Այդքան ապրանք չի տրամադրված:

Յեվ բրիգադիւրը խիստ նեղն ե ընկած: Քա՛նիսի աշխատանքն ե տեսել, խրախուսել, իր խղճի հետ հաշիվ ե արել և մտքում խոստացել, վոր նրան պիտի առաջ քաշի կամ հարվածալինի կոչման կամ պարզեվատրման... Ու հիմի... ամեն մեկի համար պայքար պիտի մղի:

Դժվար ե բրիգադիւր լինելը, յերբ սիրում ես բրիգադը:

— Հետո՞, ել ո՞վ կա:

— Սիմոնյան Միհրան: (Չայն. ամենալավ աշխատողն ե: Վոչ վոր չի առաքելում):

— Ասոյան Հայկ, Պետրոսյան Յուլիա: (Լավե՛րը ջոկի):

— Մուրադյան Սիմոն:

— Դե, հերիք ե:

Բայց Բագրատը պնդում ե վոր Մխոյան Արաուչն ել մանի ցուցակը:

Բագրատին զիջում են:

— Հիմի Դալլաքյան Արտյոմի բրիգադը:
Դե՛:

Ձայն. «Գրե՛ք Արտյոմին իրան»:

Վոչ մի խռարկություն:

— Յնդեյան Սիրական: Դալլաքյան Արամ:
Կատակասեր Աղսրարյանը կպցնում է.

— Ախպերդ ա՞, կողմնապահություն չա-
նես:

Արտյոմը ժպտում է: Նա կողմնապահու-
թյուն չի անի: Բոլորը գիտեն:

— Խաչատուրի բրիգադը:

— Գրե՛ք իրա՛ն՝ Խաչատուրին:

— Սահակի բրիգադը:

— Գրե՛ք իրա՛ն՝ Սահակին:

— Հակոբյան Հակոբի բրիգադը:

— Ինքն եստեղ ե, լողորություն ե անում,
բայց... Գրե՛ք իրա՛ն:

Կատակում է ընկ. Արզումանյանը: Յեվ
լողորությունն այստեղ կատակի խոսք է ար-
դեն: Աշխատանքի դիսցիպլինան հաղթել է
վերջնականապես:

Յեվ ցուցակները զարդարվում են ամենա-
լավ աշխատող բանվորների անուններով: Ցու-
ցակը մեծ է: Ավելի կմեծանար՝ յեթե թույլ
տային:

Բայց միայն բրիգադերը չե, վոր տալիս
է թեկնածուների անուններ: Նրան լրացնում են
հարեան բրիգադները, վորոնք ամեն որ տես-
նում են ուրիշ բրիգադում աշխատողներին:
Առհասարակ բանվորներին լավ են ճանաչում

այստեղ: Բանվորն անուն է՝ հանել՝ ամենքը գի-
տեն: Առհասարակ «ընտրությունները» ըն-
թանում են ընկերական, ուրախ և անկիրք
մթնոլորտում: Ձիջում են յերբ բրիգադերը
«նեղն» է ընկնում: Որինակ, շատ նեղն է ըն-
կած Բարգենը: Նրա ցուցակը մեծ է:

— Այնքան կան, վոր վո՞ր մեկն ասեմ և
կարմրում է դժվարությունից:

Տասը մարդ է խռաջարկում:

Իհարկե նախ գրում են իրան:

— Կասյան Հայկ — Արամ, Վարդանյան
Հայկ (լավերից լավն ա, — նկատում է ինքը
մեծ գոհունակությամբ):

Հիմի մարդ տալիս են Բարգենին: Չեն ու-
զում սիրտը կտրել:

Միաքայան Ազիզի բրիգադի ժամանակ վեճ
է ծագում Մնացականյան Խաչատուրի մասին:

— Լավն է, լավն է, — հաստատում է Թու-
մանյանը:

— Լավն է, բայց անցյալ անգամ ստա-
ցավ:

Անցնում են Հակոբ Խաչատրյանի բրիգա-
դին:

— Գրե՛ք իրա՛ն, ձայնում են:

— Վոչ, վերջերս թուլացել է:

Պարզվում է, վոր 4 ու հիվանդ է յեղել:
Յես Միջամտում եմ և վստահացնում վոր ել
չի հիվանդանա և կդառնա ամենաառաջի բր-
իգադերը: Հարգվում է իմ միջամտությունը
և բրիգադիբը հետ չի մնում իր պարգեվա-

տրությունից, վոր ի դեպ այս մթնոլորտում պատվի առարկա յե ավելի քան թե նյութական:

Յերեսխանների պես ուրախանում են այս հասակավոր մարդիկ այդ սխարզեմատրությունից: Ամեն բրիգադիր վերին աստիճան զգայուն է իր բրիգադի Վանդամներին ուրախացնելու հարցում:

Յուցակը շատ է յերկար: Չեն մոռանում և վոչ մի ցեխ կամ խումբ: Աշխատում են նորերից խռաջ քաշել: Հաճախ պարզև ստացողներին հետաձգում են նոյեմբերի 29-ին:

Յեվ ահա այս հաշվետվության նիստում, վոր իսկապես հաշվետվություն է՝ սկսում է բովանդակություն ստանալ և կոնկրետ մարդկանց մի ստվար բազմությամբ լցվել մարդու յերևակայության առջև այն հերոսական կոլեկտիվը, այն ուժերի հոծ մասսան, վոր ըստեղծում է Քանաքեռչիներ:

Բազրատ, Դրո, Սաֆար, Բալաբեզ, Դավիթ, Մանուկ, Մուշեղ, Ազիզ, Հակոբ, Անուշավան, Դրիգոր, Անդրանիկ, Սուրեն, Բաբգեն, Արտյոմ այս հերթին, իսկ ուրիշ հերթերին Կայծակ, Ռուբեն, Սաֆար, Մանվել, Գեվորգ, Ներսես, Իվան, Արտյոմ, Վասյա, Գաբեզին և շատ շատերը, վորոնց անունները կենդանի գրվում է Քանաքեռչիների քարերի, բետոնների, պատերի ու խողովակների վրա՝ ստվարանում են, դառնում մասսան և հետզհետե զինվելով, կառուցելով ու կառուցվելով գր-

նում են Սևանի բարձունքները՝ դեպի հետևյալ կասկաղները:

Քանաքեռչիներ պրոլետարիատի ձեռքի գործն է:

ՔԱՆԱՔԵՌԻ ՇԻԴՐՈՎԱԾԱՆԸ

Արզնի գյուղի տակին, հանկարծ մեր առաջ բացվում է Զանգվի խոր ձորը. վերելից նախելիս այնպես է թվում՝ նարձեռն պիտի թռչենք անդունդը: Ներքև ձորի լանջին սփռված է մի արտասովոր շինարարական աշխարհ, իր սպիտակ շենքերի չարաններով, վորոնց ծայրը հասնում է մինչև գետը:

Այստեղ է Քանաքեռգեսի գլխամասը. այստեղ է Զանգվի ջուրը կապող ամբարտակը, վորից սկսվում է հիդրոէկայանի խոշոր կանալը:

Այս ժայռապատ, յերբեմն հորանջող ձորում մի յեռուն կյանք է սկսվել. ամեն կողմից առաջդ են գալիս հանրակացարաններ, գրասենյակներ, արհեստանոցներ. ամեն տեղ հանգիստ է աշխատող բանվորների խմբերին. ամեն տեղ զգում ես շինարարության ինտենսիվ թափը:

Բայց ահա աչք ես ածում ձորի լանջն ի վար և բանվորական ուղղաձիգ շենքերի մեջ կամաց—կամաց պարզվում է ձորի նախկին պատկերը. ամեն կողմից վշշալով, սրբնթաց վազում են առունները՝ աղբյուրների վճիտ ջրերով: Ահա մի հորդառատ, փրփրան առու յե

ցատկում քարերի վրայից, անցնում է մի անպաճույճ, ցածրահասակ ցիկլոպյան շենքի կողքով. դա անշուշտ հին ջրաղացն է. խհա այն ել նրա գավիթն՝ իր ուռենիների խմբով, վորոնց հովասուն սովերում յերբեմն գիրացած հավերն եյին քշուջում թափված ցորենը, ու աղուն բերող գյուղացիք նստում, զրուցում եյին հին—հին բաներից... սպիտակած, ալյուրոտ հոնքերով, ջրաղացպանը, պատմում եր, թե ինչպես գիշերը սատանան յեկել եր, վոր խղուններն իրար խառնի, կովացնի գյուղացիներին, և ինչպես ինքը, յերեսը խաչ հանելով քշել եր նրան... Նստած հանգիստ ու անշարժ, ջրաղացի միայլար չխկչխկողի մեջ, նրանք դանդաղ խոսում, հորանջում եյին, ու ժամանակն ել կործեռ կանգ եր առնում նրանց հետ՝ իր իդեալական հանգստությամբ...:

Մի տարրորինակ թախիժ կար այդ մեկուսացած, լուռ ջրաղացի մեջ, վորը շրջապատված եր նոր շենքերի ողակով, յես արդեն պատրաստվում եյի մի ելեգիա գրել «Վորբացած ջրաղացը» խորագրով, յերբ հանկարծ մի հրգոր դղրդյուն ինձ սթափեցրեց անցյալի հուշերից. ձայնն արձագանքեց, դրմփդրմփաց համազարկերով ձորի պատերից ու անցավ դնաց, հեռզհետե մարելով: Ներքեում, կանալի ուղղությամբ ժայռեր եյին պայթեցնում, լայնացնում ու խորացնում կանալի հունը...

Իջնում ենք ներքեվ դեպի ամբարտակը. յերկու կին նստած իրենց տախտակե բուռկա-

ներում, ղեկավարում եյին ելեկտրական մո-
տորները, եներգիա եյին մատակարարում
ջրհան մեքենաներին. բանվորներն զբաղված ե-
յին ավազ հավաքելով:

Քանաքեռգեսի ամբարտակը, ինչպես և
Զորագեսինը կառուցվում ե տեխնիկայի վեր-
ջին խոսքի համաձայն, — նա ավտոմատիկ կեր-
պով կարգավորում ե ջրի քանակը՝ հենց վոր
ջրի ճնշումը հասնում ե վորոշ սահմանի, հա-
տուկ մեխանիզմն ինքն իրեն բացվում ե և
դուրս թողնում ավելորդ ջուրը:

Ամբարտակից յեղնող կանալը տալու յե
Քանաքեռի հիդրոկայանին 60 խոր. մետր ջուր
մի վայրկյանում. ջրի այս քանակի մասին գա-
ղափար տալու համար բավական ե ասել, վոր
կանալը տանելու յե մոտավորապես չորս Զանգ-
վի չափ ջուր. այդ ավելորդը լրացնելու յե
Սևանա լիճը:

Կանալի յերկարությունը սպասն յերեք և
կես կիլոմետր ե. նա պետք ե անցնի յերեք թու-
նելով, վորոնց ընդհանուր յերկարությունը
լինելու յե յերեք ու կես կիլոմետր (Զորագեսի
թունելը յերկու կիլոմետր ե): Դժվարություն
ե ստեղծում այն հանգամանքը, վոր նա հա-
մարյա ամբողջ յերկարությամբ անցնում ե
ժայռոտ շերտերով: Հենց ամբարտակից յել-
նելով կանալը գնում ե մի փոքր տարածու-
թյուն գետի ափով և մտնում ե թունելի մեջ.
Կիմացի ձորապատի մեջ արդեն սեվին ե տալիս
նրա մութ յերախը: Այդ սուաջին թունելի յեր-

կարությունը մոտ *** 300 մետր ե, նա
արդեն ծածկել ե ձորի պատը, անցել մյուս
կողմը, այժմ մնում ե լայնացնել հունը և բե-
տոնել ափերը:

Զորում, ամբարտակից ցածր, կանալի
ուղղությամբ աշխատում եյին բանվորներ՝
պայթեցնում կողքի ժայռերը: Կանալը շարու-
նակ լցվում եր վերեից թափվող աղբյուրների
ջրով. սա ել մի խանգարիչ հանգամանք ե, բայց
բանվորները հերոսությամբ պայքարում են
դրա դեմ:

Աշխատանքն այժմ ծավալվել ե կանալի
ամբողջ յերկարությամբ: Ավտոբուսը մեզ
տարավ յերկրորդ և յերրորդ շին. մասերը,
ամեն տեղ նույն ժամանակավոր շենքերն են—
գրասենյակներ, պահեստներ, ճաշարաններ,
կոոպերատիվ, կարմիր անկյուն. ամեն տեղ
լարված աշխատանք, մաքառում ժայռոտ շեր-
տերի դեմ: Մի տեղ թունել պիտի փորվի, մյուս
տեղը— կառուցվելու յե ակվետուկ (ջրա-
ցույց— կամուրջի վրայով), իսկ ներքեվի
մասերում տեղ տեղ հողային շերտերում գործ
են տեսնում յերկարավիդ եքսկավատորները
(արտափորիչները): Բայց իհարկե, ամենադժ-
վարը թունելների փորելն ե, թեպետ դա ել
այժմ դարձել ե մի սովորական աշխատանք.
մի բանվոր ասում եր—«հիմի քար կտրելն ի՞նչ
ա վոր—պանիր կտրել ա դառել»:

Կանալի յերրորդ կիլոմետրի վրա կառուց-

վելու յե մի ավագան, — ջուրը տիղմից գտե-
լու համար. մի ուրիշ ավագան ել կառուցվելու
յե Քանաքեռի մոտ, — Հիդրոկայանի ջրի
քանակը կարգավորելու համար, և վերջապես
հիդրոկայանի գլխին լինելու յե ճնշիչ ավագա-
նը, այստեղից արդեն ջուրը, խողովակներից
թափվելով ներքեվ, դեպի հիդրոկայանը,
չարժելու յե հսկա տուրբինները և գեներա-
տորների միջոցով վերածելու յե իր եներգիան
էլեկտրականության:

Այժմ արդեն, ճնշիչ ավագանից վերև,
չարժվում են յերկաթե խողովակները, նրանք
անցնում են գույգ շարքով, իսկ մասերն իրար
հետ միացվում են էլեկտրողողման միջոցով:
Այդ վիթխարի խողովակների մասին գաղա-
փար տալու համար կասենք, վոր նրանց մեջ
մշարդը կարող է ազատ կանգնել, նրանցից ա-
մեն մեկը տանում է իր հետ 33 հազար ձիու
ուժ:



Մենք նորից Զանգվի ձորումն ենք, այս ան-
գամ Քանաքեռի տակը, նորասկանչ հիդրո-
կայանի մոտ: Դիմացը՝ ձորի ժայռոտ պատե-
րն են, արևից խանձված խոտերով, շուրջը
նորից ժամանակավոր տախտակե ոժանդակ
շենքերն են, իսկ նրանց յետեվը՝ ինչ վոր յայ-
գու մնացորդներ:

Հիդրոկայանի շենքն արդեն մոտենում է
իւր վախճանին. նրա շուրջն ու ներսը տեղոտ

աշխատանք է, դեռի վշտոցի խշտական ներ-
դաշնակության մեջ: Տախտակի շենքերի մեջ
վզգում են էլեկտրական մոտորները, նրանց
դեկավարները դարձյալ կանայք են. մոտոր-
ները շարժում են խճաջարդ մեքենաները, կամ
բետոնի խառնիչները: Դուրսը յերկու կին, —
մեկը հայ, մյուսը ռուս, — կարմիր թաշկի-
նակները գլխին, ավագ են մաղում. բանվոր-
ները վազոնիկներով անընդհատ բետոն են կը-
րում դեպի հիդրոկայանի շենքը:

Հիդրոկայանի գլխին՝ ձորի դիք լանջին
բանվորները փորում են, տեղ պատրաստում
խողովակների համար, վորոնց ահագին բարձ-
րությունից (183 մետր) պիտի ջուրը հասցնեն
տուրբիններին. նրանք պիտի տան հիդրոկա-
յանին 126 հազար ձիու ուժ, վորը պիտի բա-
ժանվի յերկու հերթի: Գործի վերջը, 1935
թվի հունվարին Քանաքեռգեսը պիտի ունենա
վեց տուրբիններ, վորոնցից յերկուսը 15 հա-
զարական, իսկ մյուս յերկուսը 33 հազարական
ձիու ուժով:

Զորի վերեվն արդեն պատրաստ են յեն-
թակայանի շենքերը, (այստեղ հիդրոկայանից
ստացված էլեկտրականությունը տրանսֆոր-
մատորների միջոցով պիտի վերածվի ավելի
բարձր վոլտաժի և հաղորդի սինթետիկ կաու-
չուկի, կարբիդի գործարանին, Քիմիկինին: Այս
թվում գլխավոր տեղը բռնում է սինթետիկ
կաուչուկի գործարանը, վորին հասնում է այդ
եներգիայի կեսը: Յերեվանի յերկաթուղու

կայարանի մոտ արդեն արագ տեմպով բարձ-
րանում են նրա շենքերը, վորոնք պատրաստ
կլինեն Քանաքեռգեսի ավարտման հետ:

Դուրս ենք գալիս հիդրոկայանի ձորից
դեպի Քանաքեռի ներքևի դաշտը: Չորս կող-
մը նորից բանվորական խոշոր ավան է, իր
համապատասխան շենքով. այստեղ է հիդրոկա-
յանի շին. մասի կենտրոնը, նրա գրասենյակը,
արհեստանոցները, պահեստները: Ավանի հան-
րակացարանները, ճաշարանները՝ որվա վո-
րոշ ժամերին աղմուկով ներս են առնում բան-
վորներին ու ապա դատարկվում, չուլթյան
մատնվում մնացած ժամերին: Այստեղ կան և ա-
ռանձին բնակարաններ ամուսնացած բանվոր-
ներին համար, կա կոոպերատիվ, աղումբ, վեր-
ջինս իր բեմով, կահավորումով կարող է մրցել
մեր մի շարք աղումբների հետ:

Քանաքեռգեսի բանվորությունը միապա-
ղաղ զանգված չէ, այնտեղ կգտնեք բանվորներ
Հայաստանի բոլոր գավառներից, գլխավորա-
պես լեռնային մասերից:

Անընդհատ հոսանքով գալիս են նրանք,
թաթախվում բանվորական կենցաղով ու գի-
տակցությամբ, ու գառնում սոցիալիզմի կա-
ռուցման աղտիվ մասնակիցներ:

Բանվորության աղը՝ իհարկե հարվածա-
յիններն են, բայց շուտով ել կարիք չի լինի
կանգ առնել առանձին անհատ հարվածա-
յինների վրա, վորովհետև հարվածայնությունն
արդեն մասսայական յերևույթ է դառնում:

Այս դժվարին շինարարության մեջ, բնության
արդեւթների դեմ մաքառման մեջ, հերոսու-
թյուններ են կատարվում, վորոնք արդեն
դառնում են առօրյա յերևույթներ...

Կյանքն այստեղ առաջ է գնում աշխատան-
քի ու պայքարի բուռն ընթացքով:

ԱՅՆՏԵՂ, ՈՒՐ ՍԿՍՎՈՒՄ Ե ԶՐԱՆՅՔԸ

1. ՏԱՐԵՐԻ ԴԵՄ

Գետակի յերկու կողմից բարձրանում են ստամնավոր ահռելի ժայռեր՝ խորհրդավոր խոռոչներով։ Այդ ժայռերի առաջ, նրանց և ջրի արանքում յեղած թմբային տարածութեան վրա պզգած են տարրորինակ ձևի քարաբլուրներ։ Նրանք շատ նման են մեր գյուղական աթարի գեղերին՝ այնքա՛ն կանոնավոր, դժբեթած։ Թվում է՝ թե դրանք կենդանի եյակներ են, հազարամյա հսկաներ, վորոնք դուրս են սողոսկել գետափնյա քարափների խորշերից, յեկել նստել են այդ թմբի վրա և նայում են ներքև, ուր բացվում է իրենց համար արտասովոր մի տեսարան։

Այդ տեսարանի վրա յեն նայում շատ վերեից նաև քարափների խորշերն ու խոռոչները, վորպես հեռավոր պատմութեան անփակ աչքերը։ Իրենց հազարդարյան գոյութեան ընթացքում նրանք առաջին անգամն են տեսնում այն, ինչ կատարվում է այդտեղ, անդնդախոր ձորում։

Ելեկտրոկայանի ջրանցքը, այդտեղ է կառուցեկտրոկայանի ջրանցքը, այդտեղ է կառուցվում մեծ ամբարտակը։ Այդտեղից Հրազդա-

նի ջուրը դուրս է գալու իր հավերժական հունից, վորովհետև յե իր նոր ճանապարհով, անցնելու յե մոտ 13 կիլոմետր ճանապարհ և Քանաքեռի տակը, 175 մետր բարձրութեանից գահավիժելու յե դեպի իր նախկին հունը և շարժման մեջ է դնելու սոցիալիստական արդյունաբերութեան հսկա սիրտը, Քանաքեռի Մեկտրոկայանը, Սևան-Չանգուի հերոսավա-պի հիմնական գրվաղներից մեկը։

Սոցիալիստական մեր հայրենիքի տերերը, վոր հերոսներն ու ստեղծագործողներն են այդ եպոսի, մեր բանվորները՝ կերտում են այն պանծալի հերոսութեամբ։ Յերեք տարի առաջ ուժանակներն առաջին անգամ թնդացին այդտեղ, վորպես մեծ եպոսի նախերգանք։

Իսկ հիմա ստեղծագործութեանը գնում է դեպի ավարտ, դեպի կատարելագործութեան։ Տարերքը հաղթահարված է և ընթանալու «Գիծ Չանգուն» արգելակված է և ընթանալու յե այն ճանապարհով, վոր ցանկանում են նոր պատմութեան, մարդկութեան «իսկական պատմութեանը» ստեղծողները։

Գետի ընթացքն արգելակող հիմնական պատվարն արդեն կառուցված է։ Ամբարտակի մնացած մասերի աշխատանքը յեռում է։

Ջրհան մեքենաների ռեզինե խողովակները, փղերի վիթխարի կնճիթների նման մխրճված են գետի հունի մեջ, ցեխի և ցեխաջրի մեջ, ծծում, վեր են քաշում ջուրը և ցամաքեցնում ամբարտակի այս ու այն մասի հիմքը։

Մեքենաների և մոտոռենների աղմուկից, վորին միանում ե գետակի գոռումբ-գոչումը, բան-վորները դժվարությամբ են իրար ձայն լսում: Այդ անդնդախոր ձորում, վիթխարի քարափ-ների արանքում, ժայռերի և քարակույտերի մեջ, շինանյութերի, փորվածքների, մեքենա-ների և գործիքների առերեմութեան քառ-սում կտրչում ե մեծ ստեղծագործողի, բանվո-րի, ճարտարապետի դեմքը: Այդ ամենը հեռ-վից դիտելիս՝ մարդը չի յերևում, յերևում ե վիթի մոտիկից նայելիս՝ յերևում ե ստեղծագոր-ծական, կառուցողական «քառսը» միայն ներսը խորանալիս, արդեն կատարված աշխատանքը դիտելով, աշխատանքի ընթացքը տեսնելով՝ բարձրանում ե ստեղծագործող մարդու հե-րոսական կերպարանքը, վոր մտքի և մկանի անհաղթելի ուժով սանձահարում ե տարե-րը:

Մոտենալով աշխատանքի և հերոսության այդ բանակին, չփվելով նրանց, խոսելով և աշխատելով նրանց հետ, նրանց ամեն մի խոս-քում, դեպի աշխատանքը և միմյանց նկատ-մամբ տածած վերաբերմունքի ամենաթեթև ափնարկում, նրանց աչքերի մեջ յերևում ե ա-զատագրված, սոցիալիստական աշխատանքի հրճվանքը, հպարտությունը, բարձր գիտակ-ցությունը, մեր մարտերի և հաղթանակների ամենամեծ գրավականը:

Յեվ ահա բնության դեմ պայքարի յերած

նոր մարզկանց այդ բանակը շուտով կավարտի իր փառքի և հերոսության եպոպեյի մի գլու-խը: Շուտով ամբողջովին պատրաստ կլինեն ամբարտակը և ջրանցքի սկիզբը. «Գիժ Զան-գուն» և նրան սեղմող քարաժայռերը հաղթա-գուն» և հպատակեցված մարզկային ուժին: Այդ ստեղծագործության հերոսների անուննե-րը չողջողուն տառերով փայլելու ձևն իրենց գործի ճակատին, այնքան հիմնավոր ու մեծ ինչպես իրենց գործն ե:

2. Բ Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Գ Ե Ղ Ե Յ Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

Հենց այդտեղ, վորտեղից ծայր ե առնում ջրանցքը, կառուցված ե բանվորական ավանը: Յերբեմնի ամայի և խուլ այդ վայրում, սան-դրխաձև, իրար վրա բարձրանում են բանվո-րական հանրակացարանները, բանվորների տըն տեսական և կուլտուրական կարիքներին սպա-սարկող շենքերը, պահեստները և վարչական կառուցվածքները: Բնության յերբեմնի խուլ անկյունը շենացել և խլրտում ե կենդանի յեռ ու գեռով: Ջրանցքն սկսվում և անցնում ե բան-վորական ավանի հենց տակից: Նա դեռ ձևավոր վորական ավանի հենց տակից: Ահագին բայությամբ ված և ավարտված չե: Ահագին բայությամբ ձեղքված ե հողը: Այդ ձեղքվածքի ընթացքով ահագին տարածության վրա բացված են ստորերկրյա ջրեր, առատարուղի աղբյուր-ներ, վորոնք քրքջում են ուրախ և ճերմակ փրփուրով ու լցվում ջրանցքի հունը:

— Վորքա՛ն գեղեցիկ են,— բացականչում եմ յես:

— Այո... գեղեցիկ են... բայց մեզ չատ են խանգարում.— վրա յե բերում ընկ. Զուրար-
յանը, Քանաքեռգեսի առաջին մասի չինարա-
բուժյան պետ ինժեները,—այդ աղբյուրներէ
մի մասը մենք բռնելու յենք վերելում, բանվո-
րական ավանում, իսկ մյուս մասը պետք է անց
նի ջրանցքի տակով. այլապես, նրանց առկա-
յության դեպքում, ջրանցքը վնասվելու յե:

Մենք գնում ենք ջրանցքի հունով, այդ ինք-
նակոչ աղբերակների խոխոջի ուղեկցու-
թյամբ:

Ահա առաջին թունելը՝ 310 մետր յերկարու-
թյամբ. անցնում է ամուր նապառաժի միջով,
ամուր ապառաժ, վոր սակայն չի գիմացել սո-
ցիալիզմը կառուցող աշխատանքի գրոհին:
Թունելի յերկու ծայրերն արդեն իրար են միա-
ցել. ներկայումս լայնացվում է: Թունելի մուտ
քի մոտ թնդում են ուժատու մեքենաները, իսկ
ներսում քանդիչներն են աշխատում և գույգ
յերկաթգծերի վրայով սահում են փոքրիկ վա-
դոնները՝ բռնված պայթեցրած ապառաժի
բեկորներով: Թունելն, ինչպես և ամբողջ
ջրանցքը, կառուցվում է այնպիսի լայնու-
թյամբ, վոր կարող է տանել Հրազդանի ջրի
տասնապատիկը. այդտեղից է անցնելու ապա-
րյալում Սեանի հսկայական ջրապաշարը:

Թունելի վերջին ծայրից սկսած մինչև
Քեթրան գյուղը՝ ջրանցքի աջ կողմն ամ-

բողջովին կառուցվում է հաստ և ամուր պա-
տով, վորպեսզի հետագայում հողի նստված-
քով ջրանցքն անվնաս մնա:

Անցնում ենք վորմնադիրներէ բրիգադ-
ների միջով: Մմեն քայափոխին բանվորները
կազնեցնում են ընկ Զուրարյանին, չինարա-
բուժյան պետին, և աշխատանքի կազմակերպ-
ման այս ու յն թերության մասին հարցեր են
տալիս, բացատրություն խնդրում և պահան-
ջում կենսագործելու իրենց առաջարկները:
Մոտենում է ուս բանվորների մի բրիգադի
ղեկավար և բողոքում, վոր քար կրողները ժա-
մանակին քար չեն հասցնում. այդ պատճառով
իր բրիգադը յերբեմն պարապուրդ է տալիս:
Ընկ. Զուրարյանը տեղն ու տեղը կանչում է
այդ գործի պատասխանատու ընկերոջը և առա-
ջարկում՝ բոլոր միջոցները ձեռք առնել, վերաց-
նելու նշված թերությունը, նրա հետ միասին
արձանադրում են կոնկրետ ձեռնարկումները:
Թուս ընկերը ժպտում է դոհունակությամբ:
Պարապուրդը անդրադառնում է բրիգադի աշ-
խատանքի վրա բացասական կերպով: Սոցիա-
լիստական մրցության մեջ պարապուրդը պար-
տության վտանգ է ստեղծում և ահա այդ ա-
մոթանքը չի ուզում կրել վոչ մի բրիգադ, վոր
լցված է սոցիալիստական աշխատանքի խան-
դավառությամբ, ամեն մեկն ուզում է լինել
մրցակցության ամենաբարձր աստիճանի վրա:
Ահա մի հանգամանք, վոր ամենազլխավորն է:
Ռեկորդը՝ պարապուրդն անդրադառնում է

աշխատանքի քանակի և վորակի վրա, ուստի և բանվորի աշխատավարձի վրա: Սոցիալիստական ընդհանուր աշխատանքն ու գործը համագործում են առանձին բրիգադների աշխատանքի և աշխատավարձի հետ: Ամեն մի բրիգադի աշխատանքի մեջ բարախում են ընդհանուր, սոցիալիստական կառուցման կենսական շահը: Այդ ընդհանուր կառուցման մեջ դրված են ամեն մի բանվորական ընտանիքի բարեկեցության խնդիրը:

Յերկրորդ թունելը կառուցվում է Քեթրան գյուղի կողքը: Այդ թունելի կառուցումը նոր է սկսված և բուն թափով առաջ են գնում, վորպեսզի ձմեռնամտին աշխատանքները կատարվեն թունելի ներսում, հողի տակը, այլապես անձրևները, ձյունն ու ցրտերը կխանդարեն ամեն տեսակի հողային աշխատանք:

Յերկրորդ թունելը վերջանում է չինարարության առաջին մասի «սահմանը», սկսում է 4-րդ շրջանը. իսկ այդ շրջանն սկսվում է 3-րդ շրանգի ամենամեծ թունելով:

Բանվորական ավանից, ամբարտակից մինչև վ այդտեղ, մոտ 5 կիլոմետր տարածության վրա աշխատում են չինարարության առաջին մասի բանվորական բրիգադները: Հողային աշխատանքի պլանները լրիվ չեն կատարվում, գլխավորապես բանվորական ույժի պակասության պատճառով և ահա յեղած բանվորական ույժը լրիվ և նպատակահարմար գործադրելու

համար ղեկավար մարմինները ձեռք են առնում ամեն միջոց:

Ջրանցքի հունը գալարվում է խիստ թեք բարձրության լանջով, ապառաժուտ, քարքարուտ տարածության միջով, մինչև Քեթրան գյուղը, այդտեղից վորոշ տարածության վրա ընթանում է հարթավայրով և բուսականության միջից:

Ինչպես ձորում, ուր կառուցվում է ամբարտակը, նույնպես և ջրանցքի ամբողջ տարածության վրա իշխում է վայրենի, քարքարուտ դարիվերը: Ժայռերի անհրապույր և խոժուտեսքը հողնեցնում է մարդու տեսողությունը, նա կոպտացնում է մարդուն, վայրենացնում:

Բանվորական ավանը, ամբարտակը, ջրանցքի սարքավորումը, թունելները, վերջապես ամբողջ ջրանցքը բոլորովին փոխում են բնության անհրապույր գեմքն այստեղ: Բնությունը մեղմանում է, «քաղաքակրթվում». ամենևին չզրկվելով իր բնական գեղեցկությունից:

Յերբ յես խոսում եմ Սևան-Ձանգուի հույակապ ծրագրի կենսագործման մասին, աչքիս առջևից անցնում է նաև այն նոր գեղեցկությունը, վոր ունենալու յե մեր յերկիրը: Այդ գեղեցկության մի մասնիկն արդեն դրսևվորվում է:

Քեթրան դյուղի կողքին բարձրանում է մի փոքրիկ բլուր, այդ բլրի միջով անցնելու յե յերկրորդ թունելը, վորի աշխատանքներն արդեն սկսված են յերկու կողմից:

Յերկու կողմից ել աշխատում են մեկական քանդիչ մեքենա, եկսկավատոր: Դեռ հեռվից լսվում է այդ պողպատի զազանի մուտուցը, յերևում է նրա շնչառության գոլորշին, թանձր ծուխը: Ամուր տախտակամածի վրա հաստատված իրանը պտտվում է ինքն իր շուրջ, հարմար դիրք ընդունում, և վորպես մի վիթխարի արագիլ, յերկարում է վիզը և անճոռնի գլուխը մուտուցով կոխում քարքարուտ հողի մեջ: Կամաց-կամաց վիզը յետ է քաշվում և անճոռնի գլուխը բարձրանում է՝ բեռնված քարով և հողով. իրանը նորից պտտվում է և եկսկավատորի բեռնավորված գլուխն իջնում է դեպի՝ գույգ յերկաթգծի վրա կանգնած վագոնները, բեռը դատարկվում է և անճոռնի գլուխը նորից վերադառնում է նախկին աշխատանքին:

Դիտելով այդ տարորինակ «զազանների» աշխատանքը, վոր ղեկավարվում է հենց նրանց մեջ նստած մարդկանց միջոցով. մարդ մտածում է թե ի՞նչ ել ավելի արագընթաց թափով կընթանար, վոչ միայն մեր Քանաքեռգետի, այլ և մեր ամբողջ շինարարությունը, յեթե մեքենայացված լինեք աշխատանքն ամ-

բողջովին, — յեթե «նասիլկան» և նրա նման նահապետական միջոցները վերանային:

Աշխատանքի մեքենայացումը դեռ բավարար վիճակում չէ Քանաքեռշինում: Յեվ այդ և պատճառներից մեկն ել, վոր շինարարության պլանները լրիվ չեն կատարվում:

Մեր առջևն է մի փոքրիկ տափարակ, չուտով եկսկավատորը կհասնի այդտեղ: Տափարակի վրա փոքրիկ հողաբլուրներ կան, կանոնավոր չարված իրար կողքի: Այնքա՞ն նման են դրանք մրջնանոցի: Մոտենալով և անցնելով այդ հողաբլուրների միջից՝ այդ նմանությունն ավելի յե աչքի զարկում: Ամեն մի հողաբլրակի կողքին մի անցք կա, մի խոռոչ, վոր նախ իջնում է ուղղահայաց մի 2-3 մետր, և ապա ընդունում հորիզոնական կամ թեք ուղղություն: Յերբ մենք մոտեցանք այդ հողաբլուրներին, այնտեղ վոչ վոք չեք յերևում, սակայն լսվում եյին ստորերկրյա յերգի ձայներ, փորման աշխատանքների խուլ ձայները:

Այդ անցքերն այնքան նեղ եյին, վոր մի մարդ զգվարությամբ կարող եք ներսը շարժվել:

Փոքրիկ տարածության վրա փորված եյին 20-ից ավելի նման անցքեր, վորոնք խորացվում եյին դեռևս. աշխատանքը կատարվում եք, սակայն աշխատողը չեք յերևում: Միայն յերբեմնակի խոռոչներից դուրս նետվող հողը զգացնել եք տալիս խոռոչի ներսում յեղող մարդու մասին:

Մարդու մըջնակային այդ աշխատանքը տխուր և ցնծալից խոհեր և հարուցանում: Տխուր-վորովհետև դեռ մեր փորման տեխնիկայի մեջ հսկայական դեր և խաղում ձեռքի անմիջական աշխատանքը, դարավոր քլունդը, Յնծալից.— վորովհետև այդ համառ մըջնային աշխատանքը կատարվում և բարձր դիտակցությամբ, այն դիտակցությամբ թե դա նպատակու յե մեր յերկրի, մեր աշխատավորության բարեկեցությանը, նրա յերջանիկ ապագային: Այդ դիտակցության առաջ վոչնչություն են թվում բոլոր տեսակի դժվարություններն ու թերությունները: Յերբեմն այդ թերություններն ու դժվարությունները բացառապես բղխում են տվյալ աշխատանքն անմիջականորեն ղեկավարող աշխատողի անշնորհությունից, անձեռնհասությունից: Մատնանշված «մըջնանոցում» փորված հողը փոսերից դուրս քաշելու համար խիստ կարիք էին զգում մի քանի մետր պարանի և մի քանի հին դուլերի... Այդ մասին բողոքեցին բանվորներն ընկ. Չուրաբյանին: Կասկած չի կարող լինել, վոր ընկ. Չուրաբյանն անհրաժեշտ կարգադրությունը կաներ. սակայն ինչո՞ւ գործը հասցնել այդտեղ: Սկան-Չանգուի մեծությունը և մի քանի մետր պարանի պահանջի փոքրությունը անհամատեղելի յեն: Մի քանի մետր պարանի բացակայությունը սակայն ղանդաղեցնում և այդ վիթխարի ստեղ-

ծագործության այս կամ այն մասի ավարտումը: Այդ աններելի յե:

Այդ անցքերը պատրաստվում էին հողի պայթեցման համար: Դա հնարավորություն և տալիս եկտկավատորին աշխատելու ել ավելի արդյունավետ: Յերբ մենք այդ «մըջնանոցից» վերադառնում էինք, ամբողջ ճանապարհը, վերանցքի հունը, այդ հունով անընդհատ կաշրանցքի հունը, այդ հունով անընդհատ կատարվող շարժումը, յեռ ու դեռը և աշխատանքը նորից մեջս վերակենդանացրին մըջնանոցի, մըջնային աշխատանքի պատկերը: Այդ լցրեց եյությունս մի անսահման քաղցրությամբ: Սմենամեծ հաճույքը՝ աշխատանքի առթած հաճույքն է: Յեվ հատկապես ազատագրված հաճույքը: Հաճույքը, վոր ստաաշխատանքի հաճույքը: Հաճույք, վոր ստանում ես վոչ թե վորպես սոսկական դիտող, այլ վորպես մասնակից՝ քո ամբողջ եյությամբ:

4. ԱՐՁՆԻ ՅԵՎ ԱՐՁՆԻ

Վեց ժամյա շրջագայության ընթացքում, տարված աշխատանքային տեսարաններով, զրույցներով և խոսակցություններով, մենք չնկատեցինք թե ինչպես աշնանային յերկինքը ամպերի զորահավաք է կատարել: Յերկնքի զնգան կապույտը, վոր մի քանի ժամ առաջ այնքան դուրեկան ջերմությամբ գուրգուրում էր կոտայքի ծառատանների փոսկին և Չաներ կոտայքի ծառատանների փոսկին և հոնքերը գուր մռայլ քարափները, կիտել եր հոնքերը և պատրաստվում եր անձրեվելու: Մեր ճանապարհի կեսը մենք անցանք մազվող անձրեկ

տակ: Յերբ մենք բանվորական ավանում ե-
լինք, անձրեվն արդեն թափվում եր ամենայն
լրջությամբ:

Հենց այդ, հետզհետե սաստկացող, անձ-
րեի տակ Քանաքեռչիների ավտորուան շտապում
ե մեկնել բանվորական ավանից:

— Այդքե՛ր, հաղար անգամ պսել եմ, վոչ
վոր ուշադրություն չի դարձնում. ես անտեր
ճանապարհը չի կարելի այսպես թողնել, անձ-
րե վոր գալիս ե, շարժվել չի լինում, մի խա-
թա պիտի գա գլխներիս... տրտնջում ե ավտո-
բուսի շոֆեր ընկ. Արամը: Յես գլխի չընկա թե
խոսքն ինչին ե վերաբերում: Սակայն յերբ մե
քենան սկսեց բարձրանալ ճանապարհի վոլոր-
ները. յես հասկացա շոֆերի դժգոհությունը և
միացա նրան: Այդ ճանապարհը, Արզնի գյու-
ղից մինչև բանվորական ավանը, իջնում ե բազ-
մաթիվ վոլորներով, վայրեջջը խիստ վտան-
գավոր ե, ճանապարհը նեղ և չըջադարձի կե-
տերը կտրուկ. ի վերա այսր ամենայնի, այդ
ճանապարհը չի խճած՝ գեթ հասարակ ձևով,
և ահա՝ անձրեվի և թացության դեպքում, մե-
քենաների խորտակման վտանգը շատ հավանա-
կան ե դառնում: Այդ ճանապարհը խիստ բա-
նուկ և կարեվոր ե: Չարմանալի յե, վոր շո-
ֆերների արդարացի բողոքներն անհետևանք
են մնացել:

Այնուամենայնիվ մենք անվնաս բարձրա-
նում ենք Արզնի գյուղը:

Արզնի: Այդ յերբեմնի աննշան գյուղն ար-

դեն համամիութենական մասշտաբով ե ճա-
նաչվում: Այդ գյուղի մի ծայրից վոլորուն
վայրեջջով ճանապարհի մի ճյուղն իջնում ե
Քանաքեռի հիդրո-էլեկտրոկայանի ամբար-
տակի մոտ, ջրանցքի ակունքի մոտ. մյուս
ծայրից նույն տիպի ճանապարհն իջնում ե Ար-
զնու կուրորտը, սանատորիան:

Սոցիալիստական շինարարության տար-
բեր բնագավառների յերկու նշանավոր կոթող-
ները իրար կողքի:

Նոր աշխարհի կառուցողները, սոցիալիս-
տական մարտերի հերոսները, Քանաքեռչիների
և այլ նման կառուցումների բանվորները շատ
կարիք ունեն Արզնուն: Դրա համար, որ ավուր
աճում և մեծանում ե Արզնին, կառուցվում և
փարթամանում ե: Միաժամանակ Քանաքեռ-
գեսի ավարտումը նոր զարկ ե տալու Արզնու
շինարարությանը:

ՎԵՐԱԾՆՎԱԾ ՄԱՐԴԻԿ

Ձորագետի շինարարության յերրորդ մասի պետ ընկ. Աղաբաբյանին ներկայացրին աշխատավարձի մի ցուցակ՝ ստուգելու համար։ Նա վտաններն անհանգիստ խաղացնելով գրասեղանի տակ, հետախուզող հայացքով տնտղեց գրասեղանի վրա դրված ցուցակը և հարցրեց ցուցակը ներկայացնողին.

— Նորե՞ր են։

— Նորերից են. այստեղ են։

Հենց այդ ժամանակ ներս մտավ բանվորների մի խումբ։

— Այդ դո՞ւք եք։

— Այո, պատասխանեց բանվորներից մեկը։

— Ե՛, ի՞նչ եք արել, վոր աշխատավարձ ստանաք, — ժպտալով և խուզարկու հայացքով նայելով խոսակցին, հարցրեց Աղաբաբյանը։

— Յա՛, — զարմացավ բանվորը։

Աղաբաբյանը նորից նայելով ցուցակը հարցրեց, —

— Այս ո՞վ է վրացերեն ստորագրել՝ Առաքելով...

— Յե՛ս.

— Ե, ինչո՞ւ յես վրացերեն ստորագրել։

— Ինչ կա վոր, ֆեդերաց ե, — պատասխանեց Առաքելովը։

— Իսկապես վոր ֆեդերացիա, — հայերեն, ռուսերեն, վրացերեն։ Թուրքերենը չկա, դա չեղավ, — կատակեց. Աղաբաբյանը, ապա նորից դարձավ հին հարցին. —

— Աշխատավարձն ստանում եք, համա գործն առաջ չեք տանում։

— Մե՞նք,

— Դուք ել, մենք ել, բոլորս։

— Ձե՛. մեր բրիգադը...

— Մի, մի պարծենաք, — ընդհատեց Աղաբաբյանը, դուք լենինականցիներդ խոսելը խոսում եք, ամա լավ չեք աշխատում. ա՛յ, աշխատում ե դուրալեցիների բրիգադը, հալալ լինի. աշխատանքը նրանց աշխատանքն ե... հա, վերցրեք. շուտով կսկսի ձեր ամենը... վերջացրեց Աղաբաբյանը, և ստորագրված ցուցակը մեկնելով բրիգադավարին, դուրս յելավ։

Այդ յերիտասարդ, ամրակազմ և արտաքինից կոպիտ տպավորություն թողնող խորհրդային ենտուզիաստ ինժեներն ու շինարարը, վոր գլխավորում է Ձորագետի յերրորդ մասի շինարարությունը, բանվորների ամենալավ ընկերն ե և աշխատանքի մեջ արտաքնապես վռնչելով չի տարբերվում նրանցից։ Նրան շատ քիչ կարելի յե պատահել գրասենյակում. նա միշտ շինարարության վրա յե, մի վայրից մյուսն ե աճապարում, ստուգում, հորդորում,

վողեվորում: Նա 1930 թվին ավարտել է խորհրդային Բուհ և առաջին «չինարարական Մրկըրտությունն» ստացել է Քանաքեռգեսում: Նա կոմունիստական կուսակցության անդամ է և պատվավոր կերպով արդարացնում է իր կուսակցական և խորհրդային մասնագետի կոչումը:

Այնտեղ, ուր իր վերջին վոլորն է անում Քանաքեռգեսի ջրանցքն ու կախվում Հրադգանի վրա, ուր կառուցվում է ճնշման ավազանը, հիմա այստեղ է աշխատում ղուլալեցիների բրիգադը:

Այդ բրիգադը փառավոր անուն է հանել Քանաքեռգեսի չինարարության մեջ և կասկած չկա, վոր 1934 թվին, յերբ ամբողջ 3—4 տարվա թափված աշխատանքը դառնալու յե լույս և եներգիա, յերբ Քանաքեռգեսն անցնելու յե սոցիալիստական ինդուստրիայի հսկաների շարքը, ղուլալեցիների բրիգադի անունը բարձրանալու յե պատվո տախտակին և ավանդվելու մեր յերկրի գալիք սերունդներին:

Յերիտասարդ ինժեներ, աշխղեկ Մարտիրոսյանը՝ յերբ խոսում է ղուլալեցիների մասին՝ դեմքն արտահայտում է բարձր գոհունակություն, և՛ ակնածանք և՛ հիացում:

— Մեր հերոսներն են, ասում է նա, պարծանքով և վողեվորված, նրանց են պատկանում աշխատանքի ամենաբարձր ցուցանիշները, չա-

րունակարար: Ահա Մուշեղը, ղուլալեցի բետոնագործների բրիգադավարը, Գրոգնու նախկին նավթային բանվոր, — ծանոթացնում է նա:

Ղուլալեցիների բրիգադն իր աշխատանքով և որինակով հսկայական դեր է խաղում Քանաքեռգեսում նոր բանվորների դաստիարակման գործում:

Մարդկային զանգվածների վերափոխման, վորակավորման, սոցիալիստական վերակառուցման սքանչելի որինակներ ունի Քանաքեռգեսը: Քանաքեռգեսի չինարարությունը վոչ միայն վերափոխում է բնությունը, վոչ միայն բնության եներգիան վերածում է մարդկային կյանքը վերափոխելու հզոր յծակի, — այլև նա, այդ չինարարության պրոցեսը, վերափոխում և վերակառուցում է մարդուն: Այնտեղ կան բաղմաթիվ բանվորներ, վոր աշխատում են Քանաքեռգեսում հենց չինարարության սկզբից: Յերեք-չորս տարվա բնթացքում այնքա՛ն է փոխվել նրանց վորակը, վորպես բանվորի, նրանց վերաբերմունքը դեպի աշխատանքը, նրանց կրթական մակարդակը, նիստ ու կացը, վոր շատ քիչ բանով են նման իրենց նախատիպին:

Մի բնորոշ, միջանկյալ դեպք. հուլիսի 9-ին հերթապահ միլիցիոները (կայանի շենքի կառուցման վայրում) կես ժամ շուտ է տալիս աշխատանքը վերջացնելու ազդանշան—սուլիչը: Այդ հանգամանքը բուռն բողոք է առաջացնում բանվորների մեջ. ահագին դժգոհու-

թյուն և աղմուկ. գործը հասցվում է շինարարության պետին, թղթակցություններ են լույս տեսնում պատի թերթում:

Ինչ խոսք, վոր այդ հենց սկզբից այդպես չի յեղել: Դա արդյունք է 3 տարվա ստեղծագործական աշխատանքի, սոցիալիստական աշխատանքի ներգործության, քաղաքական դաստիարակչական աշխատանքի, շինարարության տեխնիկական յերիտասարդ ուժերի ջանքերի:

Այդ մասսայական վերափոխությունը, վերածնությունը ցայտուն կերպով յերևում է անհատ բանվորների մեջ: Իսկ դրանք քիչ չեն Քանաքեռեցու: Ահա որինակներ տարբեր բնույթի:

Ճնշման ավազանի կառուցման բանվորներից է Գեվորգ Թաշճյանը, արաբկիրցի, յեկած հին Արաբկիրից: Քանաքեռեցու աշխատում է շինարարության հենց սկզբից. յեղել է անողակ և հետամնաց բանվոր, բազմիցս փոխել է աշխատանքի բնույթը՝ մի տեղից մի տեղ դնալով. ստացել է չնչին աշխատավարձ... Յեվ ահա, Քանաքեռեցու շինարարությունը դառնում է նրա համար մի անփոխարինելի դպրոց. յերեք տարում նա դարձել է անձանաչելի: Նա հիմա առաջնակարգ վորակյալ վորմնադիր է, լավագույն հարվածային, մի քանի անգամ պարզևատրված, միջին աշխատավարձն ամսական 450 ռուբլի. հիմնովին փոխված է նրա տնտեսական դրությունը: Նրա կրթական և

քաղաքական մակարդակն այնքան է բարձրացել և ակտիվությունն այնքան աճել, վոր ընդունվել է կուսակցության շարքերը...

— Ընկեր Գեվորգ, ես ե, վաղը—մյուս օրը Քանաքեռեցու շինարարությունն ավարտվում է, դուք ի՞նչ պիտի անեք:

— Ի՛նչպես թե... դարմանում ե Գեվորգը, — իսկ յերկրորդ հե՞րթը:

— Լավ, բա՛ հետո՛:

— Հետո յել Գյումուշ—գեսը, Սուլախ—գեսը, ամբողջ Սևան—Չանգին. — վճռականորեն պատասխանում է Գեվորգը, Սևան—Չանգուի հերոսներից:

Արդեն յերկու վիթխարի խողովակներ, վորոնց մեջ ամենաբարձրահասակ մարդը կարող է ազատորեն շրջել, վիզները յերկարել և չրթները դրել են Ճնշման ավազանի բռնկին և անհամբերությամբ սպասում են ջրին: Այդ խողովակներով 175 մետր բարձրությունից դեպի Չանգուն է խուժելու 62.000 ձիու ուժանոց ջրվեժը, Քանաքեռեցու պռաջին հերթը: Այդ խողովակների մոնտաժի մեծ մասն ավարտված է, մնացել է փոքր մասը, վոր դժվարագույնն է, այդ մասն ունի 35 աստիճանի թեքություն: Դա ամենավարի մասն է, վոր անմիջականորեն կապվելու յե ելեկտրոկայանի շենքի հետ: Ներկայումս կառուցվում են այդ մասի խողովակների հենակետերը:

Յերկու վիթխարի թնդանոթափողի պես

այդ խողովակների բերանները կախված են ելեկտրոկայանի շենքի վրա: Յերբեմն թվում է, թե այդ վիթխարի հեռադիտակի փողերով վերից նայում են ձորի մեջ, տեսնելու թե ի՞նչ է կատարվում այնտեղ: Իսկ այնտեղ, Չանգուի ափին, բարձրաբերձ քարափների արանքում դանդաղորեն, բայց համառությամբ բարձրանում է Քանաքեռզեսի հիդրո—ելեկտրոկայանի շենքի տիպիկան հասակը:

Շենքի ստորին մասն ավարտված է, հիմնական բաժինը բավական բարձրացել է, սակայն ընդհանրապես աշխատանքները դանդաղ են առաջ գնում:

— Մեզ վրա շատ ծանր պարտականություն է ընկած, ինչպես տեսնում եք՝ խողովակների մոնտաժն սկսված է և շուտով կավարտվի, կայանի սարքավորման մեքենաների մեծ մասն ստացվել և ստացվում է. կայանի շենքի ավարտման ուշացումը՝ ուշացնում է մեքենաների մոնտաժն ու սարքավորումը... Իր պարտքի ամենապատասխանատու գիտակցության չեչոտվ ասում է շինարարության ղեկավար, յերիտասարդ ինժեներ ընկ. Թումանյանը: Նա որերով շենքից չի հեռանում, գիշերն էլ մնում է այնտեղ, ղեկավարում, հորդորում, մտահոգվում և մտահոգում:

— Շինանյութերի (ցեմենտի, փայտի, ավազի) պակաս ունենք, չարունակում են նա, ինչպես և աշխատող ձեռքերի, բանվորների: Չնայած մենք սքանչելի բանվորներ ունենք... և

նա թվում է այդ բանվորների թնուներն ու աշխատանքը:

Շենքի վրա յեն աշխատում հայր ու վորդի, կարապետ և Հրաչիկ Գասպարյանները: Կտայքի շրջանի կոլտնտեսականներ: Սկզբում հայրն է յեկել աշխատանքի, իր վորակյալ և հարվածային աշխատանքով շահել է ղեկավարների և ընկեր—բանվորների համակրանքը: Ապա յեկել է վորդին, վոր աշխատանքի յե անցել հոր ձեռքի տակ: Իսկ հետո՞: Հիմա վորդին, Հրաչիկ Գասպարյանը, Քանաքեռզեսի լավագույն բանվոր—վարպետներից մեկն է, իր վարպետ հայրը հիմա աշխատում է նրա ձեռքի տակ: Հայրը նոր եր վերադարձել իրենց կոլտնտեսությունից, ուր գնացել եր մի ամիս արձակուրդով: Հայր ու վորդի այնպիսի նվիրվածությամբ, խնամքով, սրտացավությամբ եյին աշխատում իմ աչքի առաջ, ինչպես ամենոր աշխատում էյին այնպես, ինչպես իրենց սեփական տունը կառուցելիս: Յեվ նրանք կառուցում են իրենց տունը, մեր տունը, ամենքիս տունը: Նրանց մեջ այդ վերաբերմունքն այնպե՛ս հիմնավոր է, գիտակցական և խոր:

Ընկ. Թումանյանն առանձին գոհունակությամբ եր խոսում այդ հոր և վորդու մասին, ինչպես և կոմյերիտական Նշան Մարգարյանի մասին, վոր հիմա հանգստի տուն է գնացել:

— Գիտե՛ք, Նշանն ահագին ժամանակ մենմինակ է աշխատել, վորպես վարպետ, այս շենքի կառուցման վրա, նա յե բարձրացրել այս

չենքը: Նա չա՛տ, չա՛տ յերիտաւարդ ե, բայց
այնպե՛ս ե աշխատում. բանիմաց, վորակյալ...
նա մանկատան սան եր, յերբ շինարարություն
յեկաւ, ուրազ գործածել չեր իմանում, քաշ-
ված, անորակ... Իսկ հիմա՞, հիմա Նշանը
մեր ամենալավ վարպետն ե, աշխատում ե ինք-
նուրույն կերպով կառուցման թեկուզ ամենա-
դժվարին մասում:

Սաֆարը յերրորդ հերթի աշխատող ե հի-
մա. ցերեկն ազատ ե և գոհունակությամբ ե
հարգում խնդիրս՝ ինձ հետ չըջելու շինարա-
րության կետերը: Յերկուսով մագլցում ենք
ժայռերն ի վեր, այնտեղից, վորտեղից խողո-
վակները կախ են ընկել կայանի շէնքի վրա,
մենք վեր ենք բարձրանում:

— Սաֆար, ծանոթացրու Ներսեսի հետ, —
ձայնում ե մեր յետեից ընկ. Թումանյանը:

Ահա և Ներսեսը, Կալփակյան Ներսեսը:
Նա Խորհրդային Հայաստան ե յեկել հեռավոր
Հունաստանից, 1931 թվի հունվարին, բազ-
մաթիւ աշխատավորների հետ: Շինարարու-
թյան մեջ ե մտել վորպէս սեւագործ բանվոր,
դէն նետելով իր նախկին արհեստը՝ կոշկակա-
րությունը: Նրա հետ շատերն են աշխատանքի
անցել, վոմանք թողել և հեռացել են. ինքն ել
սկզբում շատ ե դժվարացել և տատանվել.
մնացել ե աշխատանքի մեջ... առաջ ե դնացել
նա քայլ առ քայլ, ապա թռիչքներով: Հիմա
լավագույն բետոնագործ բանվոր ե, միջին ամ-
սական աշխատավարձը հասնում ե 370-ի,

400-ի: Կատարում ե խոշոր հասարակական
աշխատանք, մի բան, վորից այնքա՛ն հեռու
յեր սկզբում. բանկոմի անդամ ե, ներկայումս
փոխարինում ե ցեխկոմի նախագահին... Կալ-
փակյանի 4 յեղբայրն ել աշխատում են Քանա-
քեռզեսի շինարարության մեջ. մերվել են նը-
լան, դարձել մեր բանվորական ընտանիքի լա-
վագույն և գիտակից անդամներ: Ի՛նչ նմանու-
թյուն կալիտալիստական Հունաստանից ներ-
գաղթած հալածական, ճնշված, քաղցած և ան-
գիտակից Ներսեսի և Քանաքեռզեսը կառուցող,
լավագույն հարվածային, բանկոմի անդամ,
ազատագրված, գիտակից և ստեղծագործող,
դասակարգայնորեն այնքան առաջ գնացած
Ներսեսի միջև... սարեր ու ձորեր:

Իսկ ինքը, Շաղոյան Սաֆարը, վոր ինձ
հետ, ինձնից առաջ մագլցում ե դեպի վեր, լա-
վագույն որինակը չե՞ մարդկային վերածնու-
թյան:

Իմպերիալիստական պատերազմի ժամանակ
Սաֆարը 9—10 տարեկան մանուկ ե յեղել:
Բուլանրիից գաղթել են և հաստատվել Քա-
նաքեռում: 1915-ից մինչև 1925 թիվը Սա-
ֆարը բատրակ ե յեղել:

Ապա վորպէս սեւագործ բանվոր, թափա-
ռել ե վայրից վայր, շինարարությունից՝
շինարարություն: Այդ թափառականությունը
հնարավորություն չի տվել նրան վորակա-
վորվելու, առաջ գնալու: Յերբ սկսվում ե
Քանաքեռզեսի շինարարությունը, նա այդ

տեղ ե գալիս (առաջին բանվորներէց մեկը),
վորպէս սեւագործ բանվոր՝ ամսական 65 ու-
աշխատավարձով և մնում ե այդտեղ: Սկըս-
վում ե Սաֆարի վերելքը, քայլ (սո քայլ, ա-
մեն ուղղութեամբ: Գնում ե, անգրագիտու-
թյան վերացման կայան, (սպա կիսադրա-
պետների դպրոցը, հետագայում տասնապե-
տական դասընթացները, քաղաքացիները...
Սաֆարը դառնում ե կրթված, զարգացած
բանվոր: Սաֆարն աշխատանքի մեջ իրեն
դրսեւորում ե վոյպէս լավագույն բանվոր,
վորակավորվում ե, դառնում տասնապետ,
բրիգադավար, դաստիարակում և հասցնում
ե նոր վորակյալ բանվորներ: Հիմա նրա նախ-
կին բրիգադի անդամներից շատերը բրիգա-
դավար են: Սաֆարն ակտիվանում ե քաղա-
քականապէս. մասնակցում ե բանվորական կո-
լեկտիվի և կուսքջիջի բոլոր հասարակական-
քաղաքական աշխատանքներին, ի վերջո մըտ-
նում ե կուսակցութեան շարքերը:

Քանաքեռագետի յերրորդ մասի յերեք ինժե-
ներներն ել յերիտասարդ են, ավարտած
խորհրդային ԲՈՒՀ և գործնական աշխատան-
քի մեջ են մտել հենց Քանաքեռագետում: Ամ-
բողջովին մերված են բանվորական կոլեկ-
տիվին: Աշխատանքի ժամերին նրանք վոչն-
չով չեն տարբերվում բանվորներից: Նրանց
և բանվորների միջև ստեղծված ե մի սերտ,
անքակտելի շաղկապ, գործնական, ջերմ և
ընկերական վերաբերմունք, վորպիսին կարող

ե ստեղծել միմիայն աշխատանքը, (այն ել
սոցիալապէս արժեքավորված, սոցիալիստա-
կան աշխատանքը: Այդ աշխատանքն ու հա-
րաբերութիւններն այնքա՛ն բան են ավելաց-
նում յերիտասարդ ինժեներների վորակի վրա:

Քանաքեռագետի շինարարութիւնը, վոչ
միայն տնտեսական հսկա շինարարութիւն ե,
վոչ միայն դա պայքար ե բնութեան դեմ՝
բնութեան գանձերը մարդկութեան բարորու-
թեանը ծառայեցնելու, մեր կյանքն առաջ
մղելու, մեր կյանքն ու կենցաղը վերափո-
խելու համար, այլև դա մի դպրոց ե, վոր
ստեղծում ե նոր մարդու տիպը. դաստիա-
րակում ե նախկին մանր— սեփականատեր
գյուղացուն, բատրակին, լյումպեն պրոլետար
վորին, ներգաղթած՝ ուրույն հոգեբանու-
թեան տեք աշխատավորին, մի վայրից մի
վայր թրևող սեւագործ և անգիտակից բան-
վորին, նրանց դարձնում ե առաջնակարգ և
առաջավոր բանվորներ, գիտակից և մարտնչ-
չող պրոլետարներ, վորոնք վերափոխում են
կյանքը, վերափոխում են իրենց:

ԵԼԵԿՏՐԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՇԵՐՈՍԸ

Գնացեք Քանաքեռ գետի շինարարութեան չորս մասերից վորեւ մեկը: Ծանոթացեք կատարվող աշխատանքներին, խոսեցեք աշխատանքը ղեկավարող ինժեներների, տեխնիկների, մասնագետների հետ, խոսեցեք առաջավոր քանվորների հետ, հարցրեք շինարարութեան այս ու այն խնդրի, այս ու այն տեխնիկական—գիտական հարցի մասին,—անխուսափելի կերպով պատասխանի մեջ հնչվում է մի անուն, վորի հետ կապված են գրեթե բոլոր հարցերը.

— Յոսիֆ Անդրեյիչը:

Յեղեք Քանաքեռ գետի— Չորագետի վարչութիւնը, մտեք նրա բաղմամբիվ վարչական ու տեխնիկական բաժինները, հետաքրքրվեցեք շինարարութեան այս կամ այն հարցով...

— Յոսիֆ Անդրեյիչը....

— Յոսիֆ Անդրեյիչը աքսովիրեց, վոր...

— Յոսիֆ Անդրեյիչը Թիֆլիսից հայտնել է...

Յոսիֆ Անդրեյիչից հեռագիր կա, վոր անձամբ տեսնվել է ընկ. Որջոնիկիձէյի հետ, պեկուցել է նրան Քանաքեռ գետի շինարարու-

թեան մասին: Ընկ. Որջոնիկիձէյն անձամբ կարգադրել է, վոր...

Խոսեցեք շինարարութեան ղեկավարների, կուսակցական կազմակերպութեան պատասխանատու աշխատակիցներէի ինժեներա—տեխնիկական պերսոնալի ներկայացուցիչների հետ, ամենքը սիրով և հաղթանքով են խոսում, Յոսիֆ Անդրեյիչի մասին:

Յոսիֆ Անդրեյիչն իժեներ Հովսեփ Տեբ-Աստվածատրյանն է, Չորագետ—Քանաքեռ գետի շինարարութեան պետն ու գլխավոր ինժեները:

Նրա անվան շուրջը այդ հետաքրքրութիւնը, սերն ու հարգանքը, նրա հեղինակութիւնն ստեղծված են տարիներով, նրա ստեղծագործական կարողութիւնների նվիրվածութեան և տքնաջան աշխատանքի հետեւանքով, ինչ-պես Խորհրդային Միութեան բոլոր հերոսները, Հովսեփ Տեբ Աստվածատրյանը հերոսացել է գործի մեջ, աշխատանքի մեջ, սոցիալիստական շինարարութեան մեջ, վորպես աննկուն կառուցող ուժ, վորպես խոշոր գիտնական, վորպես չափազույն խորհրդային մասնագետ, վորպես սոցիալիզմի կառուցման մարտիկ:

Տեբ Աստվածատրյանի մասնագիտական աշխատանքն սկսվում է 1912 թվից, յետը նա ավարտում է այն ժամանակվա Պետերբուրգի հաղորդակցութեան ճանապարհների ինժեներական ինստիտուտը: Ինչպես խոսում ենք նա զալիս է հնից, հին տեխնիկական ինտելիգեն-

ցիայի խորքերից: Սակայն Տեղ Աստվածատր-
յանը հոկտեմբերյան հեղափոխութեան հենց
սկզբից իրեն դրսևորում ե վորպես խորհրդա-
յին աշխատող և նվիրվում սոցիալիստական
չինարարութեանը, պատասխանատու պաշտոն-
ներ վարելով Ռյազան-Ուրալ, Մոսկվա—Դոն-
բաս և այլ յերկաթգծերում: 1921 թվին Տեղ
Աստվածատրյանն հատուկ շնորհակալական
գրութիւն ե ստանում իր նվիրված աշխա-
տանքների համար:

1921 թվից Տեղ Աստվածատրյանն աշխա-
տանքի յե անցնում Անդրկովկասում, Հայաս-
տանում:

Շատ յերկար կլինեք թվել նրա պատաս-
խանատու աշխատանքների խրոնիկան: Սակայն
անհնարին ե չչեչտել մի քանի մոմենտներ:

1922 թիվ: Սկսվում ե Խորհրդային Հայաս-
տանի առաջին մեծ շինարարութիւնը, Շիրակի
հոչակավոր ջրանցքը, վոր կրում ե մեր անմահ
ղեկավարի Լենինի պանծալի անունը: Մեր կու-
սակցութիւնը, մեր իշխանութիւնը, այդ մեծ
գործի ղեկավարութիւնը պատիվ ե անում
հանձնելու Տեղ Աստվածատրյանին: Նրա ղեկա-
վարութեամբ են կատարվում հետազոտական
աշխատանքները, կազմվում ե նախագիծը և
սկսվում ե 15 հազար դեսյատին հող վոռոգող
ջրանցքի շինարարութիւնը: Մեկ և կես միլի-
ոն ուրբուլ արժեքի այդ առաջին մեծ շինարա-
րութիւնն ավարտվում ե փայլուն հաջողու-

թեամբ, մոտ հարյուր հազար ուրբուլ տնտե-
սումով:

Վերհիշենք 1925 թվի հունիսի 21—ը: Շի-
րակի ջրանցքի հանդիսավոր բացումը: Մեր
կառուցողական բանակների ցնծութիւնը, տո-
նը, վոր կրում եր աննախընթաց մասնայական
ժողովրդական բնույթ: Սոցիալիստական շի-
նարարութեան ճակատներում այսոր դրսևոր-
ված բարձր խանդավառութեան մեջ շատ բան
կա, վոր սկսված ե Շիրակի ջրանցքից:

Շիրակի ջրանցքի այդ հոյակապ ցնծու-
թիւնն ստեղծող առաջավոր հեղուների մեջ եր
Տեղ Աստվածատրյանը: Նրա անմիջական ղե-
կավարութեամբ են սկսված նաև հենց այդ
ջրանցքի վրա կառուցված Լենինականի հիդ-
րոէլեկտրոկայանի աշխատանքները:

1925 թվին Տեղ Աստվածատրյանը Խոր-
հրդային Հայաստանի ջրային տնտեսութեան
գլխավոր ինժեներն եր: Նրա ղեկավարութեամբ
ե կազմվել Հայաստանի ջրա-վոռոգման տեխ-
նիկական նախագիծը, նրա անմիջական մաս-
նակցութեամբ ե սկսվել այդ նախագծի կենսա-
գործումը: Հոչակավոր դռերի 40 հազար դես-
յատին անջրդի հողերի վոռոգման նախագիծը
պատկանում ե Տեղ Աստվածատրյանին:

Զորագետ: Դեռ այնքան թարմ են Զորագե-
տի կառուցման հետ կապված հիշողութիւն-
ներն ու տպավորութիւնները: Դեռ այսոր ել
Խորհրդային Հայաստանի բանվորներն ու կու-

տրենտեսական աշխատավոր գաղութացիությունն ապրում էն այն հոյակապ ցնծությամբ, վոր բերեց Չորագետն՝ հանդիսավոր կերպով գործարկված Խորհրդային Հայաստանի հեղափոխության 12-րդ տարեգարձին: Չորագետնի շինարարությունը անջնջելի կերպով մտել է սոցիալիզմի կառուցման մեծ պատմության մեջ, մեր գրականության և կուլտուրայի, մեր նոր կենցաղի մեջ:

Չորագետնի հետ՝ չեն մոռացվելու, մնալու յեն մեր յերկրի պատմության մեջ, արժանանալու յեն գալիք սերունդների հիացմունքին և հարգանքին և նրանք, ում անունը կսպված է Չորագետնի շինարարության հետ: Խորհրդային Հայաստանի կառավարությունն անցյալ տարի հատուկ վորոշումով պանծացրեց Չորագետնի շինարարության հերոսներից խոռաջավորներին, 28 հոգու՝ պարգևատրելով նրանց բարձր պատիվներով: Այդ առաջավորներից առաջինն էր ինժ. Տեր Աստվածատրյանը:

Սեվան—Չանգի: Դա մեր յերկրի վերակառուցման, վոչ՝ վերաստեղծման, հիմնովին հեղաշրջման պլանն է: Դա մեր յերկիրը՝ ելեկտրական ուժի և նրա վրա հենված բարձր արդյունաբերական յերկրի վերածելու պլանն է: Դա մեր ամբողջ յերկրի կյանքն ու կենցաղը հեղաշրջելու պլանն է: Դա մեր յերկիրը յույսով ու ջերմությամբ վողոցելու պլանն է... Սեվան—Չանգին վոչ միայն Խորհրդային

Հայաստանի և Անդրկովկասի համար վիթխարի նշանակություն ունեցող անտեսական շինարարություն է, այլև Խորհրդային Միության համար: Սեվան—Չանգուի գիտական հիմնավորումը, նրա կառուցումների նախագծերն ու պլաններն արժանացել են համաշխարհային հռչակ վայելող ճարտարապետ-ինժեներների հավանությանն ու հիացմունքին... Այդ վիթխարի գիտական տեխնիկական աշխատանքների գլխավորողն ու կազմակերպողը Հովսեփ Տեր Աստվածատրյանն է: Սեվան Չանգուի կայանաչարի խոշոր կառուցումներից մեկը, Քանաքեռգետն գտնվում է իր ստեղծման պատասխանատու շրջանում. մի տարուց հետո նա պիտի գործարկվի՝ մեր կառուցողական ուժերի, մեր բանվորական բանակների հաղթանակն ու խանդավառությունը հանելով ավելի բարձր աստիճանի վրա: Ինչպես վերն ասվեց, Քանաքեռչենի կառուցման պետն ու գլխավոր ինժեները Ղարձյալ Տեր Աստվածատրյանն է. ոգնականներ ունենալով այնպիսի բարձր ասի աշխատողներ, ինչպես ընկ. Բագրատ Մելիք-սեթյանը, չավագույն կազմակերպիչ և տնտեսավոր, մեր կուսակցական ընկերներից ամենայնեռանգուն ու նախաձեռնություն ունեցողներից մեկը, ինժեներներ՝ Մեյերը, Սախարնի-կովը, և ուրիշները:

Շիրակի ջրանցք. Չորագետ, Սեվան—Չանգի... դա մեր յերկրի կերպարանափոխման գիտաբանական է. դա մեր յերկրի սոցիալիստա-

կան շինարարութեան ետապների հուշարձան-
ներն են, դա մեր աճման և թափի, մեր վիթ-
խարի հաղթարշավի նշանաձողերն են: Դա մեր
կուսակցութեան, նրա մեծահանձար ղեկավարի
ընկ. Ստալինի գլխավորութեամբ ղեպի սո-
ցիալիստական դալիքները շարժվող բանվորա-
կան և աշխատավորական բանակների հանգըր-
վաններն են. Դա մեր գիտական-տեխնիկական
մտքի մեծացման-ընդարձակման չափսնիշն է:

Կա՞ ավելի մեծ պատիվ, մեծ ավելի մեծ
փառք քան այդ հոյակապ ստեղծագործութեան
մեջ հերոսանալու և անմահանալու փառքը:
Այդ պատիվն ունի մեր թանկագին Յոսիֆ Ան-
դրեյիչը, ինժ. Տեր Աստվածատրյանը: Նա մեր
յերկրի, Խորհրդային Հայաստանի ելեկտրա-
վորման առաջավոր հերոսն է: Իր այդ հերոսու-
թյունների համար նա ժամանակին աշխատան-
քային կարմիր դրոշի շխանիչ է ստացել, Անդր-
կենտգործկոմից և Հայաստանի Կենտգործկո-
մից, վորի անդամ է և ինքը:

Այս տարի Տեր Աստվածատրյանն ստացավ
Խորհրդային Սոցիալիստական Հանրապետու-
թյունների Միութեան ամենարժր պատիվը՝
Լենինի շքանշանը: Յեթե չենք սխալվում, նա
առաջինն է Խորհրդային Հայաստանում, վոր
արժանացել է այդ մեծ փառքին:

Նա այդ պատվին հասել է միանգա-
մայն արժանավայել կերպով:

ԳՈՒՐԳԵՆ՝ ՄԱՀԱՐԻ

ՅԵՐԳԻ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԼԵԶՈՒՆ

Մենք իջնում ենք Քանաքեռգետի շինարա-
րական շրջաններից մեկի զառիթափով: Ամե-
նուր, նախկին վայրի և անձեռնմուխ այս վայ-
րերում, արդեն նկատվում է մարդկային ձեռքի
մշակումը: Մարդը մասնատել է բնութեան մի
փոքրիկ մասնիկ և մաս մաս մշակում է, կրտ-
րում, կտրատում, չափում, փորում, ամրաց-
նում, պայթեցնում ու մշակում, մշակում:

Ի՞մ ուղեկիցը, շինարարութեան ակտիվ կա-
ռուցողներից մեկը, ընկ. Բարադամը, նախկին
լատրակ, հետո առաջ քաշված դյուղկոմսոմո-
լում, ապա սովորած քաղաքի յոթնամյակում,
համակրելիորեն մոռալ մի յերիտասարդ է: Նա
առանց ձանձրույթի ինձ առաջնորդում է որ-
յեկաից-որյեկա, իմ հարցերին պատասխանում
է խնամքով, ուղղելով ինքնիրեն, ինքնիրեն
հակաճառելով և յեզրափակելով: Նա շատ քիչ
է ժպտում, բայց անչափ սազում է նրա դեմքին
ժպիտը: Դժվար թե այնքան զբավիչ լիներ նրա
ժպիտը, յեթե նա հաճախ կամ շարունակ
ժպտար:

Ի՞մ ուղեկիցը շատ է մտածում այն մասին,
վորպեսզի յես կարողանամ գրելու արժանի մի
բան գտնել, մի բան, վորի մասին գեռ վոչ վոք

գրած չլինի, մի զարմանալի, նշանավոր բան: Բարադամը գիտե, վոր գրողները «մազալու» մարդիկ են, վոր «իրար հետ խմում են ու իրար տակը փորում», վոր «Քառսը» Ավ. Իսահակյանն է գրել, իսկ Թումանյանը «Լալա-Մահաբին» և վոր...

— Շատ բան մոռացել եմ... (սխր ժամանակ չկա, վոր կարդամ...)

Չե, նշանավոր մարդ ե իմ Բարադամը:

Յես ցանկություն եմ հայտնում անցնել բանվորական կացարանները: Բարադամը սիրով ընդառնում է ինձ և մենք մտնում ենք ավանդ:

Բանվորական կացարաններից մեկը, դա յերկար մի հարկանի շենք է: Յերկար ու ձիգ միջանցքի յերկու կողմերում կառուցված սենյակներում տեղավորված են բանվորներն իրենց ընտանիքներով: Կիսաբաց դռներից նայում եմ թուղցիկ նայվածքով և աչքիս առջևով անցնում են մահճակայներ, մաքուր սփռոցներով սեղաններ, Ստալինի նկարը պատերից, Բրոդսկու 26-ի գնդակահարությունը, Քանջյանը, Տեր-Գարրիելյանը...

— Մեկըն, — կանչեց Բարադամը գյուլիս դռներից մեկից ներս կոխելով, — ի՞նչ ես չինում...

— Հանգստանում եմ, ներս չե՞լուր, — լրսվեց ներսից զվարթ մի ձայն, վորի «Հանգստանում եմ»-ում անգամ հնչում էր յեկվորի չեչուր:

— Հո՛ւնաստանի՞ց, — կիսաձայն հարցրի յես Բարադամին:

Նա գլխով գրական նշան արավ և ավելացրեց...

— Մո՛նենք, հետաքրքիր է:

Ներս մտանք:

Նա պոռկած էր մահճակալի վրա և «Հանգստանում եր»: Ընկերոջ հետ անձանոթ մարդ տեսնելով, վեր թռավ տեղից, հագավ չուտերը և սեղմեց իմ ձեռքը:

Կոկիկ կահավորված սենյակ: Առաջին իսկ հայացքից կարելի յեր նկատել, վոր սենյակում գործել է կանացի ձեռքը և հսկում է կանացի պչքը: Կարճ, մաքուր վարագույր մի հատիկ պատուհանի վրա, գրասեղանի մի անկյունում տուպետային համեստ ազդիրուտներ, մահճակալի վրա, պատից նախված կիթառ, ապա հարվածայնության յերկու պատվազեր, նկարի նման կպցրած կիթառի տակը:

— Նվա՞ղում եք, հարցրի յես, յերբ նախանական ծանոթության հարցերը տրվել էյին և պատասխաններն ստացվել:

— Կը նվագե՞մ, — յերկարացրեց Մելքոնը և անմիջապես ավելացրեց, —

— Տան համար... ինձի համար...

— Ես կիթառը պատմական կիթառ ե, — ասաց Բարադամը և սպառնալից ժպիտով դարձավ Մելքոնին, — պատմե՞մ...

— Ինչո՞ւ, յես լեզու չունե՞մ, — կարմրատակեց Մելքոնը և կիթառն իջեցրեց պատից:

— Մեկըն, մատաղ «Գիշերները», «Գիշերները» նվագիր:

— Գիշերները», «Գիշերները», — ծաղրեց Մեկընը, — հապա տտոնք... մոռցա՞ր... — և ցույց տվեց հարվածաձևության յերկու պատվագրերը:

— Չէ՛, չէ՛մ մոռացել, բայց յեթե «Գիշերները» չնվագես՝ կմոռանամ...

Յես վոչինչ չեյի հասկանում այս զվարթ զրույցից և մի ցանկություն միայն ունեյիլ — լակ այդ «Գիշերները» կոչվածը:

Մեկընը ծնկծնկացրեց, ճնկճնկացրեց, տնկտնկացրեց և սկսեց. —

Գիշերները մո՛ւտ կըլլա,

Համբույր մը տաս նո՛ւշ կըլլա,

Պիտի տաս նե՛ հիմա տո՛ւր,

Վաղվան մնա, ա՛խ, վաղվան մնա

ո՛ւշ կըլլա...

Անկասկած՝ Մեկընը լավ ձայն չուներ, բայց այնքան վոճավոր եր նրա յերգը, ձայնը ունգային, սրտաբուլիս և այնքան վարակիչ, վոր յես մաքուր սկսեցի յերգել նրա հետ...

Ուրկե յեկար, ախ,

Ուրկե յեկար չեմ գիտեր...

Ներս մտալ 22-23 տարեկան մի մանկամարդ կին: Առաջին իսկ հայացքից կարելի յեր դուշակել, վոր նա ոսուհի յեր, իսկ ի՞նչ ընդհանուր բան կարող եր լինել Հունաստանի Մեկընի և այս ուսու աղջկա մեջ...

Իմ վարանումը զարմանքի փոխվեց, յերբ Մեկընը պարզեց կիթառը, շարժեց կիթառն ինձանից դեպի նա և կարգադրեց.

— Մանոթացեք, կինս...

— Լիզա, — տվեց նա իր անունը:

Պետք եր, վոր իմ դեմքը չեշտված կերպով արտահայտեր իմ ներքին զարմանքը. ահա թե ինչու Մեկընը ծիծաղեց և խփեց ուսիս.

— Ամեն բան կպատահի, ընկեր ջան, ի՞նչ կա զարմանալու... մանրամասնությունները պատմելու ըլլամ նե, բնավ չեք զարմանա...

— ապա զարձալ Լիզային.

— Խորոշո՞...

— Չե՛, — պատասխանեց Լիզան, լանլարժ հայերենի հաճելի ճիգով, — պաք եր:

— Պաք չե՛, — ժպտաց Մեկընը, — պաք նշակում ե փացելույ... Փա՛կ, փա՛կ:

— Փա՛կ, փա՛կ, — ուղղեց Լիզան՝ և իր հերթին հարձակվեց, — Խորոշո չե՛, Խարաշո՛, փացելույ չե՛, պացելույ...

Ահա քեզ զվարթ մի ընտանիք, — մտածեցի յես և իմ հետաքրքրությունը վառվեց.

— Յե՞րբ Ես ամուսնացել, Մեկըն՝, — հարցրի յես:

— Մեկ տարի առաջ, այստեղ հաստատվեցի, յերեք ամիս հետո ամուսնացա...

— Ռուսերե՞ն...

— Մե՛կ բառ չեյի գիտեր:

Սո՛ւտ, — միջամտեց Լիզան, — Խորոշո

դնալ...

— Ե՛հ, — ժպտաց Մելքոնը, — խորոշոյով ոռւակեմն կըլլա...

Հապա ինչպես հասկցաք մեկմեկու, Լիզա՞ն գուցե հայերեն գիտեր:

— Մեկ պառ չի՛ գիտի — հավաստիացրեց Լիզան իր հայերենով...

— Սո՛ւտ ես, — դիմադրեց Մելքոնը, — «լավ»՝ գիտեյիր:

— Ե՛ր, — ձանձրացավ Լիզան, — մեկ, «լավ» — ով հայերե՞ն...

Յեւ Մելքոնը պատմեց ինձ իր սրտառուչ պատմութիւնը, մի պատմութիւն, վորոնցով և վորի նմաններով աշխարհ հարուստ են մեր բազմամարդ կյանքի լուսավոր խորշերը և վորոնց կողքով գրողն իր գրչով, նըկարիչն իր վրձինով դեռ չի անցել...

2

... Մելքոնին առաջարկեցին ընտրել, — Արթիկ — տուֆ — Անի — Պեմզա կամ Քանաքեռ — գետ:

Մտածեց Մելքոնը և հարցրեց.

— Լույսի գործ չկա՞... Քանաքեռ գետ ըսածդ ի՞նչ գործ է, վոր...

— Այնտեղ կառուցվում է մեծ ելեկտրոկայան: —

— Ելեկտրոկայա՞ն... ըսել է իմ գործն է, Լույսի գո՛րծ...

— Այո, բայց կայանը նոր է կառուցվում...

Նորից մտածեց Մելքոնը:

— Ե, ավելի լա՛վ, կաշխատե՛նք...

Յեւ յեղիւ տասնյակ ընտանիքի ու նույնքան և ավելի ամուրիների հետ գնացքից Յերնան իջավ և վոտով Քանաքեռ գետ քարձրացավ Մելքոնը:

Այստեղ ընտանիքավորներին տեղավորեցին առանձին սենյակներում, իսկ ամուրիներին ընդհանուր կացարանում:

Մելքոնն ընդհանուր կացարանի մեկ անկյունը գրավեց: Մենակ եր Մելքոնը, նրա մայրը մահացել էր Փիքսում, իսկ հայրը զոհ էր գնացել Իգմիրի ջարդերին:

Խփեց Մելքոնը Հունաստանից բերած աղյուլ պատին, նրա վրայից կախեց կիթառը, չեմոդանը քեց իր մահճակալի տակ, անկողինը կարգի բերեց և դուրս յեկավ:

— Գրասենյակն ո՞ւր է, — հարցրեց նա առաջին պատահողին:

Նրան ցույց տվին գրասենյակը:

Ներս մտավ Մելքոնը և մոտավորապես ուղեց գուշակել, թե ո՞ւմ պետք է դիմել:

— Ի՞նչ կա, ընկեր, — հարցրեց նրան մի փրալիթ յերիտասարդ, — յեկվո՞ր ես:

— Յեկվոր եմ... Ե՛, ի՞նչ պիտի ընենք...

— Գնա, քիչ հետո կճաչեք, այսօր կհանգըստանաք, վաղվանից գործի կանցնեք:

— Շատ աղեկ...

Ու դուրս յեկավ գրասենյակից:

Շրջեց ավանը, մտավ ընտանիքավորներ

րին հատկացված կացարանը: Ամեն ընտանիք բռնել եր մի սենյակ: Նրանք աղմուկով բաց եյին անում բեռները, փոքրիկ սենյակները հարմարեցնում եյին իրենց կենցաղին:

Մտալ իր հանրակացարանը: Ամուրիները զվարթ աղմուկով դիմափորեցին նրան: Մեկ-քոնին հարեան եր Լո—լո Սարգիսը: Նա Լո—լո յեր կոչվում յերեւի իր յերկար վոտների համար:

— Սարգիս, տեղավորվեցա՞ր, — հարցրեց Մեկքոնը մոտենալով իր մահճակալին:

Պառկել եր Սարգիսը կռնակի վրա և աչքերը թախիծով դամել եր առաստաղին.

— Չես տեսնե՞ր, աղայի պես տեղավորվել եմ: Աթոռ մը վերցուր... Սուրճ մը չե՞ս հրամեր...

— Ի՞նչ ե ուզածդ, — հարցերց Մեկքոնը տեղավորվելով իր մահճակալի վրա և ուշադրությամբ կռանալով դեպի նա:

Սարգիսը պայթեց.

— Աս ի՞նչ բան ե... մենք վոչխա՞ր ենք, ի՞նչ ենք... իրար վրա ինչո՞ւ լեցուցին... յես ստոր համա՞ր յեկա...

— Առանձին սենյակ ընտանիքավորներուն կտրվի...

Ե՛, ի՞նչ ընենք, գիտնայի նե՛ յես ալ կամուսնանայի... բայց ո՞վ մնաց... Դուզյույենց—Ոհանեսի գեղեցկուհու հե՞տ ամուսնանամ, չե՞ նե Պոյաջոնց քառասուն տարեկան որիորդ Փառիկին ուզեմ... ճաքելիք բա՛ն...

կորուցի յավերու՜ն մեկին Պեմզա, մեկին Արթիկ, ճաթելու բա՛ն...

— Խե՞նթ ես, Սարգիս— համոզեց Մեկքոնը, — կամաց—կամաց՝ կամուսնանա...

— Արադ—արադ փռելն յե՞տքը... չե՛մ ուզեր... յես այս կյանքին սովո՞ր չեմ:

— Սովոր չես՝ մի ապրիր, — ծանձրացավ Մեկքոնը:

Սարգիսը փնչաց, բարձրացավ տեղից, պատից վերցրեց Մեկքոնի կիթառը, նվագեց մի յեղանակ, ծանձրացավ, ջղայնացավ, թքեց և դուրս յեկավ:

Հայտարարվեց վրը անցնեն ճաշի:

Սարգիսը նստեց Մեկքոնի դեմ: Նա ուտում եր և քիթը քաշում.

— Շամպայն մը չե՞ք առներ, Մեկքոն ե—ֆենդի՛, Պորտո՞... Չարլստոն մը քաշել չըտա՞մ... Ֆիա՛թ...

3

Փորել: Պայթեցնել: Շինանյութ կուտակել: — Ահա՛ աշխատանքը:

Վազել: Հասնել: Աշխատել: — Ահա՛ Մեկքոնը:

Դժգոհել: Փնչա՛լ: Գործալքել: Կիթառ նվագել: — Լո—լո Սարգիսը:

Բարձրացավ ծուխը, սարը վորոտաց, իսկ Մեկքոնն զգաց, վոր ազդերից մեկը ցնցվեց և տաքացավ:

Մի կտոր քար, ուղիղ ազդերի փափուկ

մսին: Վտանգավոր մի բան չէ, բայց պետք է բուժել:

Տխրեց Մելքոնը: Ո՞վ պիտի վազի փոքրիկ ելեկտրոկայանից մինչեւ պայթեցման կետերը:

4

Բայց ահա՛ հիվանդանոց:

Այստեղ Մելքոնը ծանոթացավ գլխության քույր Լիզայի հետ:

Ծանոթացա՞վ, ի՞նչ ծանոթացավ:

Ոոսում եյին նրանք համբերի լեզվով: Մելքոնին ջո՛ւր եր հարկավոր, ցուցամատով տկտկացնում եր կոկորդը, վերքը ցավո՞ւմ եր, ծովում եր գեմքը, իրեն լավ եր զգում— ժպտում եր և գլխով անում լա՛վ, լա՛վ...

Հավանեց, շատ հավանեց սեւ Մելքոնը այդ չեկ, կապուտաչյա ոռւս աղջկան: Ձգաց և այն, վոր Լիզան հետեւում և լսում է իր համր լեզուն ուշադրությամբ և հոգածությամբ, զգաց և տխրեց.—

— Հավա՛տն անիծեմ, լեզու իմանայինք՝ ամուսնանայինք...

...Մի որ Լիզան չեկավ: Հանկարծակիի յեկավ Մելքոնը: Գործը շա՛տ հեռու յեր գնացել: Նա այնքան եր վարժվել ամեն որ մահահալից մահահալ շտապող Լիզային, վոր այդ որը, յերբ Լիզան չկար, յերեխայի պես նա տխրեց և նրան թվաց, վոր այլևս նրան չի տեսնի:

Ինչո՞ւ, ինչո՞ւ Մելքոնը չհասկացրեց Լիզային, վոր սիրում է նրան, վոր շա՛տ է սիրում, ե՛ւ, միայն Մելքոնը գիտե, թե ինչպես է սիրում... բայց ի՞նչ լեզով հասկացներ, ի՞նչ լեզվով...

Յեկավ բժիշկը: Գոհ չմնաց հիվանդանոցի և հիվանդների դրությունից:

— Լիզան վոսկի յե,— ասաց բժիշկը,— իսկապես հարվածային... չկա Լիզա, չկա կարգ ու կանոն:

— Չկա Լիզա, չկա վոչ կարգ ու կանոն և վոչ ել Մելքոն,— մտածեց Մելքոնը և շոշափելով ազդերի առողջացող վերքը, վերմակը քաշեց գլխին:

Առափոտյան զարթնեց Մելքոնը և վորոչեց թեյից հետո դիմել բժշկին՝ հիվանդանոցից ազատվելու համար:

Գոնների մեջ յերևաց Լիզայի կերպարանքը: Մելքոնի աչքից չվրիպեց, վոր Լիզան առաջին հերթին աչքերով փնտռեց և գտավ իր մահահալը և իրեն:

Ուրախությունից նա չիմացավ ի՞նչ աներ: Նա նստեց մահահալի մեջ և ձեռքը տանելով դեպի սիրտը՝ շոշափեց և գլուխն ուրրեց:

Սա նշանակում եր, վոր Մելքոնը չափազանց կարոտելիք Լիզային և մինչև անգամ նրա շանակում եր, վոր սիրում է Լիզային:

Իսկ Լիզան կարծեց, վոր Մելքոնը գան-

դատվում ես սրտից և նրան ինչ վոր կաթիլներ խմցրեց:

Մեկընն անմոռունչ խմեց դրսոն կաթիլները և ավելի դառնացավ.—

— Լեզո՛ւ, լեզո՛ւ չգիտեմ, հավատն անիծեմ...

5

— Յես դուրս գրվեցի հիվանդանոցից,— չարունակեց Մեկընը,— դուրս գրվեցի, բայց ել եմ Մեկընը չեյի: Ուր դնայի, ինչ անեյի, խեղճ գնում եր հիվանդանոցի ճանապարհով: Ել եմ սրտով աշխատել չեյի կարող: Ամառային խաղաղ յերեկոներին վերցնում եյի կիթառըս, նստում եյի Լիզայի կացարանի դիմաց մի քարի վրա և վա՛յ-բարամ—

Գիշե՛ր-մեր-ը՛ — մո՛ւթ— կլլա՛...

Հետո Լիզան նայում եր պատուհանից, հենց վոր նայում եր, ուրախ յեղանակներ եյի նվազում, հենց վոր գնում եր՝ տխուր յեղանակներ, հետո մոտենում եյի պատուհանին.—

— Ուղարնի՞կ,— հարցնում եր Լիզան,— ուղարնի՞կ խարաշո, լողր մե՛տ...

Հասկացա միտքը.—

Հարվածային ես, քեզ կուզեմ, հարվածային չես չեմ ուզեր:

Հետո նա ինձ՝ «խարաշո», յես նրան՝ «լավ», բայց մի «խարաշո»-յով ու մի լավ— ով սե՛ր կըլլար:

Յես թափ տվի ինձ և սկսեցի աշխատել

կորովով, յես հասկացա, վոր զգացմունք առանց աշխատանքի կուպեկ չարժի և վոր մարդիկ ապրում են վո՛չ միայն կիթառով, այլև աշխատանքի դրոշով, վոր ծիծաղելի յես այն մարդը, վորը շրջում ե շարունակ կիթառը ձեռքին և վոր անհոգի յես նա, ով չի հասկանում կիթառի լեզուն:

Հասավ բանվորական կոնֆերենցիայի ուր:

Այդ ուր բաժանեցին հարվածայիններին պատվազրեր և նվերներ:

— Լիզա կրո՞մովա՛ — կարդաց նախագահը: Առաջ անցավ Լիզան ծափահարությունների հեղեղի միջից և ստացավ պատվազիրը:

— Մնացի,— մտածում եյի յես,— խանդարե՛ց ինձ անիծված կիթառը,— չկարողացա աշխատել...

— Մեկըն նախանյա՞ն...

Յես չիմացա, ինչպես հասա քեմ, ինչպես ստացա պատվազիրը, բայց յերբ յետ դարձա, նստարանների արանքում ինձ բռնեց Լիզան:

— Ուղարնի՞կ...

— Ուղարնի՞կ, ուղարնի՞կ, խորոշո՛,— և հարձակվեցի յերկու ձեռքով նրա մի ձեռքի վրա ու սկսեցի թափ տալ: Ծիծաղում եր նա և ինչ վոր ասում եր իր լեզվով, բայց յես զգում եյի, վոր մենք հասկանում ենք մեկ-մեկու լեզուն:

Յերկու որից ֆանաքեռգեսից յերեք հոգի իջան,— ժպտաց Մեկընը, տղադիցիոն հե-

քիաթներէ վոճով վերջացնելով իր պատմութիւնը, — մեկը Մեղքոնը մեկը Լիզան, մյուսը Չաղսի վկա ընկեր Բարաղամը...

Արդեն իրիկուն եր: Սեդանի վրա թշնամ եր խաղաղ ինքնայեռը: Լիզան շողշողուն աչքերով նայում եր պատուհանից դուրս հուշերով վերացած, Բարաղամը յերեսը հենած ցուցամատին նայում եր մի անշարժ կետի, իսկ Մեղքոնի մատները մեքենայաբար շրջում եյին կիթառի վրա: —

Գիշեր-մերը՝ — մո՛ւտ — կըլլա՛...

1933 թ.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԾԻՐԱԶ

ՔԱՆԱՔԵՌԳԵՍԻԳԻՇԵՐԸ

1

Այս անդորր ժամին՝ դաշտերն են ննջում,
Հյուսում ե գիշերն հովանոցն իր ծո՛ւլ,
Ձորում Ձանդո՞ւն ե այդպէս կարկաչում,
Թե՞ մեր մուրճերն են քանդում զնդոցով...

Իջնում են ժայռից ջրերն անհանգիստ,
Ու քանդում են դեռ նրանք անդնդում.
Ժայռի, կրակի, վորոտի տակ խիստ,
Քարոտ չըջակայքն ու ձորն ե թնդում:

Լեռան վոտքերը քանդե՛ն, ավերե՛ն, —
Փշրտեն պիտի մինչեւ առավոտ,
Վոր լույսն անդնդից քաղաքը բերեն,
Վոր գիշերները փախչե՛ն վեհերոտ...

Վոր ժի՛ր, մանկական աչքերի պէս բյուր
Ամե՛ն, ամեն տեղ լույսերը շողան,
Վոր հսկաների մեր այս վոսկեհուր
Հնոցներն ահեղ, անվերջ վոքոտան...

Յեւ գիշերն ածխե թեւերն ե փռում,
Բայց, նրանք ձորում քանդում են նորից,

Քանդում են ժայռը, ավյուներ յեռում,
Աղմուկն անխռով բարձրանում՝ ձորից:

Քանդում են՝ ժայռը գլուխը թեքում՝
Գլորվում, ինչպես խոյ մի սրարտված.
Քարի տակ մտած վշշշո՛ւմ է Չանդուն...
Բայց նրանք խնդո՛ւմ, քանդում են լարված:

Քիչ հեռու նրանց տներն սպիտակ,
Ու վորմե՛ր, վորմե՛ր, վերելակ խրթին.
Ամեն բան առել մռայլ քողի տակ
Ձորերն է խուժում գիշերը մթին:

Լուսինն ել ինչպես իմ դալուկ նանին
Սարին է թիկնել, ահա և մենակ
Անցնում է դաշտով պոետ-պատանին,
Միրաը հուլզով լի, աչերն-արեգակ...

Յեվ կարծես բոցոտ խոհով հանճարեղ
Չնգում էր նրա գլուխն անխռով,
Գլխին՝ աստղերի մաղն վոսկեղեն
Ծո՛ւլլ որորվում էր լուսնի ձեռքերով:

Շուրջը՝ գիշերվա անդորոն էր իջել,
Ու մթնաշաղը՝ փովել ամենուր.
— Բայց նրանք՝ ձորի անդորրը փշրել
Ու քանդում էին գղիրդով անլուր...

Լսում էր ջահել պոետն հրավարս,
Լսում էր նրանց աղմուկը կռվի,
Յեվ հուլզերն ինչպես մրրիկ յերկնահաս
Արևոճվեցին դաշտերում սրտի...

— Գնաց, մոտեցավ, կանգնեց՝ վիթխարի
Ձորի յեղեքին, ներքեվում լարված
Կռիվն էր թնդում իր ընկերների,
Ահեղ յեռանդով ու բոցավառված:

Յեվ նրանց սմեն զարկի տակ մեռնում
Փշրվում էին ժայռերը մամուռ.
Ու կռիվն ահեղ՝ նոր թափ էր պոնում,
Նրանց սրտերում ու ժայռերի մոտ:

Անքուն աչքերը աստղերին հառած,
Անկերջ վորոտով սողում էր Չանդո՛ւն,
Ծեծում ամերի ժայռերը սառած՝
Ինչպես կատաղի վազը վանդակում:

Այն սե լեռան տակ բանվորներն արի—
Յերկչոտ գիշերվա ստվերների տակ,
Քանդում հնամյա բերդը ժայռերի,
Ու գեռ թնդում էր ձորը բովանդակ:

Յեվ մեր պոետի սեզ հոգին թնդաց,
Վորպես այն ձորը՝ նրանց զարկեցին.
Շուրջը՝ գիշերվա համբույրները թաց
Հովերի թեվով յեղնում են ձորից:

Իսկ ցածում՝ հսկա ժայռերը քանդում՝
Փշրում-փշրտում ու փռում գետին.
— Եյ-հե՛՛՛յ, դու ինչքան դանդա՞ղ ես քան-
դում...

— Գիշե՛ր է, մո՛ւլթն է, գիշե՛ր է չորս գին»...

Լսեց պոետը: Միտրը պատանու
Պղտորվեց վորպես Սրազը գարնան.
Ու վոնց՝ հնամյա սուրը պատյանում՝
Մթնեցին նրա խճերը վառման:

Յեվ նա դայրացած, վորպես թռչող նետ—
Բյուր արծիվներից նոր թեվեր առած
Թռավ—վոր կամքի սրով առհավետ
Պատուե գիշերի թեվերն անթափանց...

— Ինչո՞ւ, ինչո՞ւ՝ յես ուշանում արև՝,
Նրանք քանդում են ձորերը խավար,
Լույս են բերելու նրանք մեզ համար,
Լույսերի արքա՝ դուրս արի, արև...

Յեվ արևելքի դարբասները փակ
Փչրե՛ց... ծվատեց վարադուլը սեվ,
Թնդաց արչալույսն ու հաղարեքանդ
Դուրս թռավ սառից արևը պարթեվ:

Հորիզոնները՝ ինչպես վոսկու ծով
Ծփացող լույսն են ավետում ձորին,
Յեվ որը բացվեց անո՛ւշ զնդոցով
Հազար ու հազար հուր-արևների:

Ձորում թնդացին Ժայռերը նորից,
Պոետի դեմքին Ժպիտը խաղաց,
Աղմուկ, յերգ, սուլոց բարձրացան ձորից,
Ու վոսկի հազան լույսերը խավար:

Յեվ քայլեց նորից պոետն հրամազ,
Վոգեվորության կրակն աչքերում.

Վերեվում թողած սարը յերկնահաս՝
Նրա քնարը զողանջեց ձորում:


Յեվ քանդում է յին ընկերներն իրա,—
Քանդում հաղթական ու կերտում նորից.
Վոր հարյուր հազար սյունների վրա
Քանաքեռգեսը բարձրանա ձորից...

Վոր լույսի վոսկե պսակներ հյուսենք
Ամեն տան ճակտին, ամեն խրճիթում.
Վոր դաշտերը մեր վոսկով պսակենք—
Ուր հիմա հասկի ծիծաղն է կաթում:

3

Սմայի դաշտե՛ր, գյուղերը մթին
Լույսի շապիկ են հագնում այս գիշեր.
Ինչպես կայծակը Մասսի գազաթին՝
Լույսն է ծիածան կապում այս գիշեր:

Մեռնում է հինը— խավար եր ու չար,
Իմ հոգում հիմա լույսի հարույթյո՛ւն.
Մեր լույսի հսկան սյուններով հազար,
Հազար նիզակով լույսն է ծվատում...



Յ Ա Ն Կ

Խմբագրութեան կողմէն	5
Գուրգեն Մահաի	
Յերգ խավարի, մահացման և լուսնի ու հարութեան	7
Դ. Դեմիրճեան	11
Գիգանտի ծնունդը	
Դ. Դեմիրճեան	31
Պարզ հատուածը	
Արագի	36
Քանաքեռի հիշրոկայանը	
Վ. Նորենց	
Այնտեղ, ուր սկսվում է ջրանցքը	44
1. Տարերքի դեմ	47
2. Բնութեան գեղեցկութունը	52
3. Սոցիալիստական մըջուններ	55
4. Արդնի և Արզնի	
Վ. Նորենց	58
Վերածնված մարդիկ	
Վ. Նորենց	70
Ելեկարավորման առաջին հերոսը	
Գուրգեն Մահարի	77
Յերգի և աշխատանքի լեզուն	
Հովհաննես Շիրազ	91
Քանաքեռեան գիշերը	

ՀՀ Ազգային գրադարան



NL0388803

ԳԻՆԸ I Դ.

443



Կանաքի ընթաց
Լիտերատուրնի սնորնի
Դիւ. ՏՏՐ Արմենի, Քրիւան, 1934

72.694